

-368 =

911

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏԻՆ ԿԻՑ  
ՀԵԲԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏ

338.98

Զեռագրի իրավունքով

ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏՄԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏ. ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐ

ԿՈՒՐՍ II

1931

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 4

ԿԱԶՄԵՑ՝ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
ԽՄԲԱԳՐԵՑ՝ Կ. ՎՈԱՄ

Տ Ե Տ Ե Ս Ե Կ Ա Ն  
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՅԵՐԵՎԱՆ

1931

23 AUG 2017

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱ- ՌՈՒՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. Յերկրի Խնդուստրացումը ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱ-  
ՎՈՐ ԳԻԾՆ Ե.

Խնդուստրացման պրոբլեմն անցման շրջանի տարբեր ետապներում -

Խնդուստրացման խնդիրն, իրեվ ընդհանրապես սոցիալիս-  
տական շինարարության կարևորագույն պահանջ, մատնանշված է  
յեղել գեռևես «Կոմունիստական մանկֆեստում»—վորտեղ ասված է,  
թե անցման շրջանի խնդիրներից մեկն ել հանդիսանում է «պետա-  
կան գործարանների և արտադրության գործիքների թվի ավելա-  
ցումը», Սակայն ինդուստրացման քաղաքականության խնդիրը  
դիտական կոմունիզմի հիմնագիրների մոտ, ինչպես տեսնում ենք,  
դրված է յեղել շատ ընդհանուր ձեվով: Յեվ այլ կերպ ել չեր կա-  
րող լինել, վորովհետեւ հաղթանակած պրոլետարիատի այդ քա-  
ղաքականության կոնկրետացումը բոլիսում ենախ և առաջ յուրա-  
քանչյուր յերկրի առանձնահատուկ պայմաններից:

Դեռևս 1917 թ. սեպտեմբերին այսինքն Հոկտեմբերյան Հեղա-  
փոխության նախորեյին Լենինը եր «Սպառնացող կատաստրոֆը  
և ինչպես նրա գեմ պայքարել» բրոցյուրում գրում եր՝

«Հեղափոխությունը արեց այն, վոր մի քանի ամսում Ռու-  
սաստանը որ քաղաքական կարգերով հասավ առաջավոր յերկրնե-  
րին: Բայց այս թիւ է: Պատերազմը անողոք է, նա հարցը գնում է  
անխնականությամբ նահատակվել կամ հասնել առաջավոր յերկրնե-  
րին և անցնել նրանցից նաև տնտեսապես (ընդգծումը իմն է Գ.  
Հ.): Ամենավելի կամ ամբողջ ուժերով սլանալ առաջ: Այդպես  
է հայտն ուժած պատմության կողմից» (Լենին. Հատոր 14  
մա 2, 1917).

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր սոցիալիզմի համար մա-  
տերիալ, տեխնիկական հիմքի պատրաստումը վորպես անցման

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱ  
ԳԼՈՒԽԱ 6583 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 3178  
ՏԻՐԱԺ 500



11-247219

շրջանի առաջնահերթ խնդիր նախագծված էր մեր բայլչեվիկիան կուսակցության նախահոկտեմբերյան ծրագրում, վորի մասին մենք բավականաչափ խոսեցինք մեր յերկրորդ առաջաղբության մեջ:

Այստեղից պետք է անել այն յեղբակացությունը, վոր ինդուստրացման պրոբլեմը անմիջականորեն բղխում է անցման ըրջանի եկոնոմիկայից և սոցիալիստական շինարարության եյությունից: Դրան վորպես ապացույց կարող է ծառայել թեկուղ այն փաստը, վոր Վ. Ի. Լենինի անմիջական իդեալով և ցուցմունքներով եր կազմված Գոյելրոյի ծրագիրը, վորը իրականում յերկրի ինդուստրացման տասնամյա պլանն եր, ընդունվեց դեռևս ուսական կոմունիզմի քաղաքականության վերացման նախորեյին՝ խորչըների 8-րդ և 9-րդ համագումարներում (1920 և 21 թ.): Սակայն մենք առիթ ունեցանք մատնանշելու, վոր վերականգնման ըրջանի գլխավոր ինդիբը դա նոր արտադրական հարաբերությունների հիման վրա՝ ժողովրդական տնտեսությունը մինչ պատերազման մակարդակին—հասցնելու խնդիրն եր: Զնայած այն հանդամանքին, վոր վերականգնման շրջանը իր մեջ պարունակում եր նաև վերակառուցման տարրեր (ելեկտրոֆիկացիա և քիմիական արդյունաբերություն և այլն), այնուամենայնիվ այդ շրջանում ինդուստրացման պրոբլեմն իր սրությամբ իրենի հերթական առողջա և պրակտիկ խնդիր դրվել չեր կարող: Այդ շրջանում գերազանցապես խնդիր եր դրված նոր արտադրական հարաբերությունների հիման վրա յերկու պատերազմների հետեւառքով (իմաստիալիստական և քաղաքացիական) քայլքայլած տնտեսությունը վերականգնել՝ հետագա սոցիալիստական վերակառուցման, այսինքն սոցիալիզմի համար մատերիալ—տեխնիկական բազա նախապատրաստելու նպատակով:

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴԱՀԱՄԱՅԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ.—

Այս բոլորից հետո ակնհայտ է, վոր ինդուստրացման պրոբլեմն իր ամբողջական սրությամբ, իբրեւ որվա առաջնահերթ խընդիր, դրվում է վերակառուցման շրջանում:

Այժմ մնհրաժեշտ է պարզել, թե ի՞նչում է կայանում սոցիալիստական ինդուստրացման եյությունը և նշանակությունը:

Ամենից առաջ անհրաժեշտ է պարզ պատկերացնել, վոր ինդուստրացումը և յերկրի արտադրության աճումը նույն հասկացողությունները չեն, չնայած այն հանդամանքին, վոր ինդուստ-

րացումը բնականոն ձեվով իր հետ բերում է նաև արտադրության աճում: Սակայն կարելի յերկրի տարեկան արտադրությունն աճեցնել նաև առանց հետեւվողական ինդուստրացման: Այդ հնարավոր և թեկուղ այն դեպքում, յերբ յենթադրենք մեր յերկրության պարկ տրվեր դյուզատնտեսության լայնացման, իսկ մեքենաները և ընդհանրապես արդյունաբերական ավարանքները ներմուծվելին արտասահմանից: Սակայն այս ճանապահը մեր յերկրի համար վոչ թե սոցիալիստական արտադրության աճման ճանապարհն է, այլ կապիտալիստական: Միջանկյալ հիշենք, վոր այս ճանապարհը առաջարկվում եր կուսկցության 14-րդ համագումարում ընկընկի կողմից: Դժվար չե յենթադրել, վոր այդ քաղաքականության հետևանքը, յեթե մենք այս ընդունեմնը և կենսագործելինք, մինելու յեր այն, վոր ԽՍՀՄ-ը դառնարու յեր համաշխարհային կապիտալիզմի առլարային գաղութը: Այս որինակի վրա պետք է պարզ լինի, վոր մեղ համար ընդունելի յե, վոչ թե յերկրի արտադրության և արտադրողական ուժերի աճումը «Ընդհանրապես», այլ արտադրողական ուժերի այնպիսի աճումը ու զարգացումը, վոր ուժեղացնելու յե ամենից առաջ մեր տնտեսության սոցիալիստական հատվածը, ապահովելու յե, մեր տնտեսական անկախությունը կապիտալիստական յերկրներից և վերջապես ստեղծելու յե մատերիալ—տեխնիկական բազա կապիտալիզմի մասցը ների վերացման և սոցիալիստական հասարակարդ ստեղծելու համար: Այս բոլորից հետո հաղիվ թե յերկար բացատրությունների կարիք լինի ցուց տալու համար, վոր մեր առաջընթացի միակ ուղին սոցիալիստական ինդուստրիայի զարգացման ուղին է: «Ժողովրդական տնտեսության աճումը մեղ մոտ գնում է վոչ թե տարեբային, այլ վորոշակի ուղղությամբ, այն ե՝ ինդուստրացման ուղղությամբ, ինդուստրացման նշանաբանի տակ, ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմում ինդուստրիայի տեսակարար կընի աճման նշանաբանի տակ, մեր յերկիրը աղբարայինը ինդուստրիայինի վերափոխելու նշանաբանի տակ» (Ստալին 16-րդ համագումարի քաղացականություն հջ 23):

Սոցալիստական ինդուստրացման քաղաքականության եյությունը կայանում է նրանում, վոր մենք զարկ տալով արդյունաբերությանը, նպատակ ունենք արագորեն մեծացնել նրա տեսակարար կշնորհ յերկրի ամբողջ տնտեսության մեջ: Դրա համար անհրաժեշտ է, վոր արդյունաբերությունը ավելի արագ զարգանա, քան դյուզատնտեսությունը: Արդյունաբերության զարգացումը վոչ միայն անհրաժեշտություն է ներկայացնում միայն իր սեփա-

կան՝ այսինքն արդյունաբերության արտադրական ապրանքների (արտադրության միջոցների) և մասսաների սպառման միջոցների արտադրության տեսակետից, այլ և անհրաժեշտ է գյուղատնտեսության զարգացման և սոցիալիստական վերակառուցման համար, քանի վոր գյուղատնտեսությունը իր արտադրության միջոցները ստանում ե արդյունաբերությունից (գերազանցապես ծանր): Այդ հանգամանքը հենց այն կարելորպույն նախադրյալներից մեկն ե վոր ա) տարբերում և սոցիալիստական ինդուստրացումը կալիսալիստականից և բ) սոցիալիստական ինդուստրացումը, ինչպես տեսականորեն, նույնպես և պրակտիկայում դարձնում ե մի ձեռնարկում, վոր ընդորդում և ամրող ժողովրդական տնտեսությունն, իսկ այդ նշանակում ե նաև գյուղատնտեսության ինդուստրացումը:

ԱՐՏԱԿԲՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՅԵՎ, ԱՐՏԱԴՐԵԼՈՒ ՊՐՈԲԼԵՄԸ.

Մեր ինդուստրացման հետեւյալ բնորոշ կողմն այն է, վոր նա իր առաջ խնդիր ե դնում ավելի արագ տեմպերով զարդացնելու ծանր արդյունաբերությունը քան թեթևի: Այս հանգամանքը բոլոսում ե նրանից, վոր առանց արտադրության միջոցների արտադրության ծանր ինդուստրիայի, անհնար ե թե սպառման միջոցների արտադրության լայնացումը և թե գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխության համար խոչոր մեքենա—տեխնիկական բաղայի պատրաստումը:

Ընկ. Սատալինը կուսակցության 16-րդ համագումարում խոսելով մեր սոցիալիստական արդյունաբերության հրամանատարական դրության և աճման տեմպի մասին հետեւյալ կերպ ե բնութագրում մեր ինդուստրացման ելությունը՝

«Մեր ժողովրդական տնտեսության աճումը դնում է ինդուստրացման նշանաբանի տակ, բայց մեղ պետք ե վոչ թե ամեն տեսակի ինդուստրացում: Մեր հարկավոր ե այնպիսի ինդուստրացում, վոր ապահովում ե սոցիալիստական ձեվիլի արդյունաբերության հարածուն գերակշռությունը մասն ապրանքային, առավել ևս կապիտալիստական ձեվիրի նկատմամբ: Մեր ինդուստրացման բնորոշ տիպը կայանում ե նրանում, վոր նա սոցիալիստական ինդուստրացում ե, այնպիսի ինդուստրացում, վորն ապահովում ե արդյունաբերության հանրայնացված սեկտորի հաղթանակը մասնատիրական սեկտորի, մանրալրանքային և կապիտալիստա-

կան սեկտորի նկատմամբ» (Ստալին 16-րդ կուսհամագումարի քաղ. Հաշվետվություն. եջ 24) (Ընդդժումները հեղինակին են):

Սոցիալիստական ինդուստրացման հետ մեկ տեղ աճում ե նաև բանվոր գասակարգը, աճում ե պրոլետարական դիկատուրայի տնտեսական և քաղաքական ուժը, ինդուստրացումը և առաջին հերթին ծանր ինդուստրիայի ստեղծումը և զարգացումը վերացնում ե այն հակասությունը, վոր գոյություն ուներ վերականգնման շրջանում՝ այն և հակասությունն սոցիալ քաղաքական կարգերի և նրա մատերիալ տեխնիկական բազայի միջնել: Այդ առթիվը ընկ. Սատալինը Համկ(բ)կ Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումում ասում է՝

«Մենք հասանք և անցանք առաջալոր կապիտալիստական յերկրներից նոր քաղաքական կադրերի ստեղծման, խորհրդային կարգերի ստեղծման իմաստով: Այդ լավ ե, բայց այդ քիչ է: Վորպեսզի հասնենք սոցիալիզմի վերջնական հաղթանակին, հարկավոր ե հասնել և անցնել այդ յերկրներից նմանապես տեխնիկատնտեսական տեսակետից: Կամ մենք այդ կիրագործենք, կամ մեզ էնչնեն: Այդ ճիշտ ե, վոչ միայն սոցիալիզմի կառուցման տեսակետից: Այդ ճիշտ ե, նաև կապիտալիստական շրջապատման պայմաններում մեր յերկրի անկախությունը պաշտպանելու տեսակետից: Անհնար և պաշտպանել մեր յերկրի անկախությունը զունենալով պաշտպանության համար արդյունաբերության բազա» (Ստալին «Լենինիզմի ինոքիրները» եջ 505):

ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Մենք վերելում մատնանշեցինք, վոր ինդուստրացումը միաժամանակ գյուղատնտեսությունը զարգացնելու և հանրայնացնելու համար անհրաժեշտ և արտադրական միջոցների ստեղծումն է: Պարզնեք մեր այս միտքը:

Գյուղատնտեսությունն իր վերականգնման ըրջանը վերջացնելուց հետո այլևս հետաքա արագատեմալ զարգացում ունենալ չեր կարող մինչեվ, վոր նա իր հիմնական կապիտալը (արտակրության մջոցները) չլայնացներ: Այդ հնարավոր եր միայն ինդուստրիայի ստեղծման և զարգացման հետևանքով: Սոցիալիստական ինդուստրիայի զարգացմամբ մեր պայմաններում ստեղծվում են նաև մատերիալ տեխնիկական պայմաններ գյուղացիական անտեսությունները սոցիալիստական վերափոխության յենթարկե-

Եռե համար : Այլ խոսքով ասած , սոցիալիստական ինդուստրիալի զարգացումը մեր պայմաններում միաժամանակ հանդիսանում է գյուղատնտեսության մեջ սոցիալիզմի մատերիալ բազայի ստեղծումը : Գյուղատնտեսության մեջ խոչը մեքենայական տեխնիկայի ներմուծումը նշանակում է գյուղատնտեսության վերածումը խոչը մեքենայական արտադրության : Գյուղատնտեսության ինդուստրացումը պըոլիտարաբական դիկտատուրայի պայմաններում՝ արտադրական կոռպերազման միջոցով սաեղծում է գյուղատնտեսության մեջ նոր սոցիալիստական արտադրական հարաբերություններ , այստեղից ել բախում են վերակառուցման զրջանի արտադրական դաշնքի այն նոր և գլխավոր ձեվերը , ՎՈՐԻՆՑ ՄԱՍԻՆ , ՄԵՆՔ ԵԹԻԹ ՈՒՆԵՑԱՌ ԽՈՍԵԼՈՒ ԱՆՑՑԱԼ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ : Սակայն գյուղատնտեսության ինդուստրացումը չպետք է շփոթել գյուղատնտեսական ինդուստրիալի (արդյունաբերության) հետ : Գյուղատնտեսական ինդուստրիան , դա գյուղատնտեսական ինդուստրացման մի մասն է : Գյուղատնտեսական ինդուստրիան—դա գերազանցապես այն գործարաններն ու ձեռնարկություններն են , վորոնք զբաղվում են գյուղատնտեսության արտադրանքի նախնական վերամշակությամբ : Իսկ գյուղատնտեսության ինդուստրացում , այդ առաջին հերթին նշանակում է գյուղատնտեսական արտադրության պրոցեսների մեքենայացում : Դա նշանակում է հողագործության , գյուղատնտեսության մեջ ևս կիրառել մեքենաների միջոցով արտադրության պրոցեսները կազմակերպելու ձեռնարկումների սիստեմ , այնպես ինչպես այդ տեղի ունի արդյունաբերության մեջ : Այդ արգեն տեղի յե ունենում մեզ մոտենալ ՄԱՍ-ում , շնորհիվ մեր խորհրդային տնտեսությունների և խոչը մեքենայացված կուկատիվ տնտեսությունների կազմակերպման և այդ տնտեսություններում շաղկապված մեքենայական սիստեմ կիրառելով :

Նոր տեխնիկայի ազգեցության ներքո գյուղատնտեսությունը փոխադրվում է ինդուստրիալ ոելսերի վրա և վերափոխվում ուղանում և արդյունաբերական տիպի տնտեսություն : Արդյունաբերությունը տեխնիկական տեսակետից՝ կապիտալիստական յերկներում՝ տարբերվում է գյուղատնտեսությունից նախ և առաջ իր կապիտալի բարձր որգանական կառուցվածքով , իսկ մեզ մոտ տեխնիկական կառուցվածքով : Գյուղատնտեսության ինդուստրացման հետեւանքով աստիճանաբար վերանում է նաև այդ տեխնիկա—տնտեսական տարբերությունը արդյունաբերու-

թյան և գյուղատնտեսության միջև : Մեքենաների սիստեմի հետ զուգընթաց գյուղատնտեսության ինդուստրացման ասպարեզում մեծ դեր է խաղալու ելեկտրոֆիկացիան՝ լայն (առումնով) վոչ միայն մեխանիկական եներգիայի , այլ և բնության անհպատյերելույթների չեղոքացման տեսակետից (ինչպես նաև քիմիան) : Մեր գյուղատնտեսության ինդուստրացումը սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության համար տեխնիկական կառուցվածքի ամձան պրոցեսն է մինչեւ այն աստիճանի , յերբ հնարավոր է գաւունում անցումը մեքենաների սիստեմին , յերբ հնարավոր է գաւունում գյուղատնտեսությանը արդյունաբերական արտադրության բնույթին հացնելու (մասնագիտացում , մասսայական արտադրության նույնանձման մթերքների) : Դա հնարավոր է կատարել գյուղատնտեսական մթերքները արդյունաբերական վերամշակման միջոցավ (գյուղատնտեսական ինդուստրիա) և գյուղատնտեսական արտադրության տեխնիկական հեղաշրջման միջոցով :

Սակայն մեր ԽՍՀՄ-ի պայմաններում գյուղատնտեսության ինդուստրացումը (ամբողջական առումով) միաժամանակ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրացեսն է , իսկ տեխնիկական վերակառուցումը մինչեւյն պրոցեսի սոցիալիստական վերակառուցման հակառակ կողմն է : Այլ խոսքով ասած ինդուստրիան ամրագ գյուղացիական տնտեսությունները այդ նշանակում են նախ և առաջ հանրայինացնել նրանց արտադրությունը : Մեր գյուղատնտեսության ինդուստրացման և հանրայինացման տիպերի մասին խոսելու , պետք է նկատի ունենալ , վոր նրանք իրենց բաղմազանությամբ գործադրություն ունեն միայն իրենց անցման շրջանում (հողագործական ընկերություններ , արտելներ , խորհրդային տնտեսություններ , կոմունաներ) : Ապագայում մենք կունենանք միասնական սոցիալիստական ազրո կոմբինատու : Սակայն այժմ նրանց տարբերությունը չպետք է աշխաթող անել : Դրանցից յուրաքանչյուրի բնույթի վրա մենք կանգ կառնենք , յերբ խոսելու լինենք գյուղատնտեսության մասին : Մեր գյուղատնտեսության վերականգնումը մեր քաղաքականության մասին : Մեր գյուղատնտեսության վերականգնումը մեզնից ավելի յերկար ժամանակ խնեց , քան արդյունաբերության վերականգնումը : Յեթև արդյունաբերության մեջ վերականգնումը ավարտվեց 1926 թագավարության մեջ այդ տեղի ունեցավ միայն 1927 թ . վերջում : Այն ժամանակ , յերբ մենք 1926 թ . արդեն անցել ենք մեր սոցիալիստական արդյունաբերության վերակառուցմանը , գյուղատնտեսությունը իր նախազատերազման արտադրանքը

չեր վերականգնել։ Այն ժամանակ, յերբ մեր արդյունաբերությունը զարգանում էր արագ տեմպերով՝ գյուղատնտեսության զարգացումը տարվում էր համեմատաբար շատ զանդալ։ «Ինչով բացարձիք համեմատության զարգացման այսպիսի համեմատորն զանդալ տեմպը մեր ազգայնացրած արդյունաբերության զարգացման տեմպի համեմատությամբ։ Բացարձիքում ե այդ ինչ-պէս մեր գյուղատնտեսական տեխնիկայի չափից դուրս հետամնացությամբ և դյուզի կուլտուրական չափազմաց ցածր մակարդակով, այնպես ել հատկապես նրանով, վոր մեր փոշիացած գյուղատնտեսական արագրությունը չունի այն առավելությունները, վոր ունի խոշոր միավորված աղջայնացված արդյունաբերությունը։ Գյուղատնտեսություն արտադրությունը ամենից առաջ չէ ազգայնացած և չի միացած, այլ փոշիացած և թափթափված և կտորներով։ Նա (գյուղատնտեսության արտադրությունը—բացարձությունը իմն ե. Գ. Հ.) չի կատարվում պլանային կարգով և առայժմ գեռ յենթակա յե մեծ մասմբ մանր արտադրության տարերքին։ Նա չի միացված և չի խոշորացված կոլեկտիվացման գծով, վորի հետեւվանքով գեռ ներկայացնում է հարմար տաղարեղ շահագործման համար, կուլակային տարբերի կողմից։ Այս հանդամանքները փոշիացած գյուղատնտեսությանը դրկում են, խոշոր միացված և պլանային կարգով տարվող այն հսկայական առավելություններից. վորը ունի մեր արդայնացված արդյունաբերությունը» (Ստալին. 15-րդ կուսհամագումարի քաղ. հաշվետվություն)։

Բայց չե վոր մենք զիտենք, վոր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը միշտ ել ներկայացնում են ժողովրդական տնտեսության այն յերկու բնագավառները, վորոնք սերտորեն կապված են միմյանց հետ։ Առաջնորդու զերը ժողովրդական տրնտեսության մեջ խաղում ե արդյունաբերությունը, սակայն մեկի բացարձակ հետամնացրության պայմաններում չի կարող զարգանալ մյուսը։ Ռեբեն 1928 թ. գյուղատնտեսությունը արդյունաբերությունից չափանիք չետ մնալը վտանգում էր մեր արդյունաբերության հետագա զարգացմանը և մեր ժողովրդական տնտեսության ինդուստրացմանը։

«Վորտեղ ե յելքը գյուղատնտեսության համար։ Մի գույշ մեր արդյունաբերության՝ ընդհանրապես և ազգայնացած արդյունաբերության՝ մասնավորապես զարգացման տեմպի զանդալցման մեջ է։ Վոչ մի զեկում։ Դա կիներ հետադիմական, հակառակության ցնորդականության մեջ է։ Վորոնք համարակարգությունը տարբերակական տեխ-

պետք ե զարդանա և կղարգանա արագ տեմպով։ Դրանում ե յերաշխիքը մեր շարժման զեպի սոցիալիզմը։ Դրանում ե յերաշխիքը այն բանի, վոր ինդուստրացվի ինքը գյուղատնտեսությունը։ Վորտեղ և ուրիմն յելքը մանր և փոշիացած գյուղացիական տնտեսությունների հողի հանրային մշակության հիման վրա խոչը միացված տնտեսությունների անցնելու մեջ ե, նոր բարձր տեխնիկայի բազայի հիման վրա, հողի կոլեկտիվ մշակության անցնելու մեջն ե։ Յելքը նրանումն ե, վոր մանր և մանրագույն գյուղացիական տնտեսությունները աստիճանաբար, բայց անշեղութեն, վոչ մնշման կարգով, այլ որինակի ու համոզման կարգով, միացնել խոչը անտեսությունների մեջ՝ հասարակական ընկերացին կոլեկտիվ հողամշակության հիման վրա գործադրելով գյուղատնտեսական մեքենաներ և տրակտորներ, գործադրելով գյուղատնտեսության ինտենսիվիկացիայի գիտական պրիորներ։ Ուրիշ յելքը չկան։ Առանց դրան մեր գյուղատնտեսությունը ի վեճակի չի վոչ հասնել և վոչ ել անցնել գյուղատնտեսորեն ավելի զարգած կապիտալիստական յերկրներից (Կանադա և այլն)» (Ստալին 15 համագումարի քաղ. հաշվետվություն)։

Այսպիսով 1928 թ. մենք կանգնած ենք այն դրության առաջ, վոր գյուղատնտեսությունը շատ հետ եր մնում սոցիալիստական արդյունաբերությունից, վորը կարող եր կասեցնել սոցիալիստական արդյունաբերության հետագա արագ զարգացումը, այսինքն կասեցնել մեր շարժումը դեպի սոցիալիզմը։ «Այստեղից ել համառ և սիստեմատիկ աշխատնքի անհրաժեշտություն, գյուղատնտեսության վերակառւցման և խոչը հասարակական հողագործության ստեղծման, վորը կանգնած լինի ժամանակակից տեխնիկայի մակարդակին»— (16-րդ կուսկոնֆերանսի վորոշումներ և բանաձեվեր, էջ 159)։

## ԽՆԴԱԽՏՏՐԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Ստալին գյուղատնտեսության լայն ինդուստրացման և հանրայնացման մենք կարողացանք անցնել միայն 1928 թ., վորով հետեւ «յեթե վերականգնման ընթացման հիմանականում ավարտելիս յերեվան յեկան մանր տնտեսությունների հետագա արագ աճման սահմանափակ հնարավորությունները, ապա միաժամանակ քանակապես և վորակապես աճեցնեն պրոլետարական պետության բեռնուրաները, վորոնք հնարավորություն տվեցին ոգտագործել խորչը ըրդային սիստեմի առավելությունները՝ նոր մեքենայական տեխ-

նիկայի և մանր տնտեսությունների (կոլեկտիվ աշխատանքի հիմքներով) միացնելու հիմունքներով գյուղատնտեսության վերելքի տեմպերը արագացնելու համար»: (16-րդ կուս . կոնֆերանսի բանաձեռք ու վորոշումներ , եջ 17):

Այնուհետեւ՝

«Գյուղատնտեսության արագ վերելքի խնդիրները լուծելիս և խոչոր հասմրակական գյուղատնտեսական արտադրություն ստեղծելիս, Խորհրդային յերկրի զարգացման ներկա ետապում Խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը հետեւում են՝ ա) արդյունաբերության արագ զարգացման վրա և մասնավորապես գյուղատնտեսական մեքենաների արագ աճան վրա»:

Մեր սոցիալիստական ինդուստրիայի հսկայական հաջողությունների հիման վրա յեր, վոր առաջացավ միջակ գյուղացիական մասսայի մեծ բնկումը գետի կոլեկտիվ տնտեսությունները, վոր ծայր առավ ամբողջ գյուղերի և ռայոնների համատարած կոլեկտիվացումը: Ի՞նչ բան է համատարած կոլեկտիվացման ռայոնը, դա հողային խոչոր տերրիտորիան ե, վորտեղ գյուղատնտեսությունը նոր արտադրական հարաբերությունների հիման վրա ամբողջին կամ գերազանցափես հանրայնացված ե (կամ թե այսպիսինը նախապատրաստված ե) և առանձին կոլեկտիվ տնտեսությունները միավորված են ու կազմակերպված միասնական սիստեմի մեջ (կամ նախապատրաստված են դրա համար), իբրև կուստային միություն: Այդ միավորման համար՝ 1. հիմք է ծառայում եներգետիկ բաղան՝ այն ե, խոչոր մեքենա-տրակտորային կայանները (իսկ այժմ կարող են լինել նաև ծիամեկնայական կայաններ) և այն ելեկտրոկայանները, գործնք սպասարկում են այդ համատարած կոլեկտիվացման ռայոնը, 2. պակաս դեր չի խաղում միավորման դրույմ նաև ազգո-ինդուստրիալ կոմբինատուր, վորն ընդունելու յե այդ ռայոնի ամբողջ արտադրությունը և արտադրանքի վերամշակումը—դորժարանային յեղանակով. 3. միավորման մոմենտներից մեկն ել կարելի յե համարել ասլրանքային արտադրանքի տեղափոխությունը (տրանսպորտային որիշենտիրովկա և այլն):

Այդպիսով համատարած կոլեկտիվացման իր հիմքում ունի առաջին հերթին սոցիալիստական արդյունաբերության արագացումը, նրա հեղումն գեր խաղալու նախադրյալը յերկի տնտեսության մեջ: Դրա հետևանքով հնարավոր ել լինում «մա-

նուֆակտուրային» տեխնիկայի հիման վրա կառուցված համատարած կոլեկտիվացման ռայոնները փոխադրել «դորժարանային» տեխնիկայի, վերացնելով մանր արտադրության «վերադարձի» և կաղվատականի վերածնման բոլոր հնարավորությունները: Միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա յե, վոր մենք կուլակությունը սահմանափակելու և նեղելու քաղաքականությունից անցնում ենք նրան վորապես դասակարդ վերացնելու քաղաքականությունը:

«Մենք հանդուրժել ենք այդ արյունաբերուներին, սարգերին և վամպիրներին (կուլակներին. ծանոթությունը իմն ե. Գ. Հ.) կիբառուելով նրանց շահագործական հակումների սահմանափակման քաղաքականությունը: Հանդուրժել ենք, վորովհետեւ վորչովդ չեյինք կարող վոխարինել կուլակային տնտեսությունը, կուլակային արտադրությունը: Այժմ մենք հնարավորություն ունենք ավելորդով վոխարինելու գրանց տնտեսությունը մեր կոլտնտեսությունների և խորհնանտեսությունների տնտեսությամբ» (Ստալին. «Պատասխան ընկ. կոլտնտեսականներին» եջ 44): Միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա յե, վոր հնարավոր և դառնում վերացնել կուլակության արտադրական բաղան և վերածնման հնարավորությունները, քանի վոր վերանում ե այն սոցիալական բաղան, վոր «ամեն որ և ամեն ժամ ծնում է կապիտալիզմ»: Եռոյնը կարող ենք ասել նաև ամբողջ մեր տնտեսության վերաբերյալ, վոր մեր յերկրի ամբողջ տնտեսության սոցիալիստական ինդուստրացումն ե, վոր հնարավորություն ե տալիս արմատախիլ անելու կաղիտավորմը, վերացնելու մանր արտադրությունը, սոցիալիստորեն վերափոխելով մանր արտադրությունը, վորը մնուցանում է կապիտալիզմը: Մեր գյուղատնտեսությունը լինելով ամբողջ ժողովրդական տնտեսության մոմենտներից մեկն կարելի յե համարել ասլրանքային արտադրանքի տեղափոխության սոցիալիստական ինդուստրացման անբաժանելի մասը:

Այժմ պարզ ե, որ մեր ժողովրդական տնտեսության և յերկրի ինդուստրացման յելակետը սոցիալիստական ինդուստրիայի և առաջին հերթին արտադրության միջոցները արտադրող ինդուստրիայի արագատեմպ զարգացումն ե:

ԻՆՉՈՒ ՅԵ ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ԱՐԴԱՎԱՑԵՄՊ  
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Հարց ե ծագում, արդյոք հնարավոր չե ավելի դանդաղ տեմպով զարգացնել ինդուստրիան:

«Խոսելով արտաքիշն և ներքին արտադրությունից, մենք կարող ենք ինքը գործը տանել ավելի դանդաղ տեմպով: Բայց գործը նրանումն է, վոր առաջինը՝ չի կարելի աչքաթող տնել ներքին և արտաքին իրադրությունը և յերկրորդը՝ յեթե յելնելու լինենք մեղ զբաղատող իրադրությունից, ապա չի կարելի չընդունել, վոր նա այդ իրադրությունն է թերում մեր ինդուստրիայի զարգացման արագ տեմպը»: (ՍՏԱԼԻՆ «Էնինիքմի ինդիրները»—էջ 504):

Ինդուստրացման արագ տեմպերի ինդիրը մեր զարգացման ներկա ետապում սոցիալիստական հեղափոխության հիմնական ինդիրների լուծման տեսակետից վճռական նշանակություն և ստանում:

Ընկ. Ստալինը հետեւյալ կերպ ե բնութագրում ներքին և արտաքին պայանների այս կոմպլեկտը, վորն անհրաժեշտ ե դարձընում զարգացման բարձր տեմպերը:

—Տեսմենք, թե վորոնք են դրանք:

«1. Արտաքին պայմաններ. սլորկետարական— սոցիալիստական հեղափոխությունը կատարվեց համեմատորեն տեխնիկո-տնտեսապես հետամնաց յերկրում: Այն ժամանակ, յերբ մենք, մեր քաղաքական կարգերով ամենաառաջավոր յերկիրն ենք, մեր տեխնիկայի և տնտեսական զարգացման մակարդակով շատ հետ ենք մեռում առաջավոր կապիտալիստական յերկրներից: Այս հակառակ թյունը մինչև վոր չվերացնենք, մենք չենք կարող ապահովել սոցիալիզմի վերջնական հաղթանակը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ե հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրունքին նաև տեխնիկո-տնտեսական տեսակետից: Մեր յերկրի տնտեսական-տեխնիկական հետամնացությունը մեր կողմից չի հնարիմ, այդ հետամնացությունը դարավոր հետամնացությունն է: Վոչ ֆեոդալական արիստոկրատիան և վոչ ել բուրժուազիան չկարողացն այդ հետամնացության վերացման ինդիրը լուծել: Մեր յերկրի դարավոր հետամնացությունը հնարավոր ե լուծել միայն սոցիալիստական շինարարության հիման վրա—պրոլետարիատի դիկտատորայի միջոցով: Մեր ինդուստրացման

արագ տեմպի խնդիրն այդպես սուր չեր դրվի, յեթև մեր յերկիրը տեխնիկո-տնտեսապես այնպես զարգացած լիներ, ինչպես, որինակ, Գերմանիան է: Մեր ինդուստրիայի զարգացման արագ տեմպերի խնդիրը չեր կարող այնպես սուր ձեվով դրվել, յեթև մենք չինք չլինելինք պրոլետարական դիկտատորայի միակ յերկիրը, այլ լինելինք խորհրդային մի քանի առաջալոր յերկիրներ, ինչպես են Գերմանիան, Ֆրանսիան և մյուսները: Այդ դեպքում կապիտալիստական ողակումը չեր կարող ներկայացնել մեղ համար այն վտանգը, ինչվոր ներկայումս է, իսկ մեր յերկրի տնտեսական անկախության խնդիրը հետին պլանը կզնար: Մենք կմտնելինք պրոլետարական դիկտատորայի ավելի զարգացած յերկրների սխալ տեմպի մեջ: Մենք նրանցից կատանայինք մեքենաներ մեր արդյունաբերության և գյուղատնտեսության համար, մաստակարարելով նրանց հում նյութ և պարենալորման մթերքներ: Հետեւաբար մենք կարող ենք զարգացնել մեր ինդուստրիան ավելի զանդաղ տեմպով, բայց գուշ գիտեք, վոր մենք դեռևս այդ պայմանները չունենք և հանդիսանում ենք պրոլետարական դիկտատորայի միակ յերկիրը՝ զբաղատված կապիտալիստական յերկրներով. վորոնցից շատերը կանգնած են մեզանից շատ և շատ առաջ տեխնիկա-տնտեսական տեսակետից:

Ահա թե ինչու հասնելու և անցնելու խնդիրը կապիտալիստական յերկրներից տնտեսական տեսակետից լենինը դնում եր իրեւ մեր զարգացման մահու և կենաց խնդիր: (Ստալին):

Այսուհետեւ ընկ. Ստալինը սոցիալիստական արդյունաբերության աշխատավորների առաջին համամիութենական կոնֆերանսում հետեւյալ կերպ և պատկերավորում մեր ինդուստրացման արագ տեմպերի հարցը:

«Կասեցնել տեմպերը դա նշանակում է հետ մնալ: Իսկ հետ մնացողներին խփում են: Բայց մենք չենք ուղղում խփել:... Շահագործողների որենքը այլպես և խփել հետ մնացածներին և թույլերին: Կապիտալիզմի— գայլի որենքը: Դու հետ մնացիր, գութույլ ես, նշանակում ե գու անիրավացի յես, ուրեմն քեզնից պետք ե խույս տալ: Ահա թե ինչու չի կարելի այլևս մեղ հետ մնալ: Անցյալում մենք չունեյինք և չեյինք կարող ունենալ հայրենիք: Բայց այժմս մենք տաղալել ենք կապիտալիզմը, իսկ իշխանությունը մեղ մոտ բանվորական ե, մենք ունենք հայրենիք, և մենք կպաշտպանենք նրա անկախությունը: Ուղում եք արդյո՞ք, վորպեսզի մեր սոցիալիստական հայրենիքին խփեն, վորպեսզի նա

Էռոֆյնի իր անկախությունը, իսկ յեթե այդ չեք ցանկանում, դուք պետք ե կարծ ժամանակամիջոցում վերացնեք նրա հետամնացությունը և զարգացնեք իսկական բայլշեմիկյան տեխպեք, ... այլ ուղիներ չկան: ... Մենք հետ ենք մնացել առաջավոր յերկրներից 50-100 տարով, մենք պետք ե այդ տարածությունը անցնենք 10 տարում: Կամ մենք կանենք արդ, կամ թե մեղ կնննեն» (Առաւին):

Այս պարզ և անյերկիմաստ մաքերը բացատրության կարիք չեն գուռմ:

Ներքին պայմաններ . «Քանի դեռ մենք ապրում ենք մանր գյուղացիական յերկրում կապիտալիզմի համար , մուսաստանում կա ավելի ամուր տնտեսական բաղա , քան կոմունիզմի համար » : Դա անհրաժեշտ է հիշել : Ցուրաքանչյուրը , ով ուշադրությամբ դիտում է գյուղի կյանքին համեմատած քաղաքի կյանքին , դիտի վոր մենք կապիտալիզմի արմատները չենք վերացրել և ներքին թշնամու ֆունդամենտը , հիմքը չել խախտվել : Վերջինս պահպամ և մանր տնտեսության վրա և վորպեսզի խախտել նրան , կա մի միջոց-փոխադրել յերկրի տնտեսությունը , նույն թվում նաև գյուղատրն-տեսությունը նոր տեխնիկական բաղայի վրա , ժամանակակից խո-չըր արտաքրության տեխնիկական բաղայի վրա : Այդպիսի բաղահանդիսանում և միայն ելեկտրականությունը : Կոմունիզմը գա խորհրդացյին իշխանությունն և գումարած ամբողջ յերկրի ելեկ-տրոֆիկացիան » : (Լենին . 17-րդ հատոր . էջ 427—428) :

լէնքնը յերկրի ելեկտրոֆիզիան հասկանում եր վոչ թե առանձին ելեկտրոկայանների կառուցում, այլ նոր տեխնիկական բաղադրամանականից խոչոր արտադրական բաղայի ստեղծմամբ», վորն այսպես թե այնպես կապված է յերկրի ելեկտրոֆիզիայի հետ:

Յեթև լինի ելեկտրոֆիկացիան 10—20 տարուց, ամենափոքր չափով անդամ՝ զարհութելի չի մանր հողակործի բնդիմիլիությունը և նրա տեղական առևտություն տեղական շրջանառության մեջ:

Յեթե ելեկտրոֆիկացիան չեղավ, միւնույն ե, անխուսափելի յե վերադարձը դեպի կապիտալիզմը («Լենին, Պարենհարկի մասին»):

Ահա թե ինչպես կտրուկ եր գնում առ խճակը լենիկը :

«Բայց վորպեսզի կարողանանք հասնել այդ խնդրի իրականացման, անհրաժեշտ ե մեր ինդուստրիայի արագատիմպ դարգացումը» (Ստալին) :

Սակայն մենք արդեն մատնանշեցինք, վոր սոցիալիստական խնդրասուրադարձան պրոցեսը անկարող է առաջ բնթանալ առահե

Պյուղանուեսության հիմնական վերակառուցման, արձատական վերաբիուման :

«Կարելի՞ յէ արդյոք առաջ շարժել ինդուստրիալ գյուղատնտեսությունը թողնելով չափից զուրու հետ մնացած աեխնիկայի պայմաններում, չափահանովելով ինդուստրիայի համար գյուղատնտեսական բազան, չվերակառուցելով գյուղատնտեսությունը և չփոխեցնելով նրան ինդուստրիային։ Վոչ, չի կորեի՛ Այստեղից ել ինդիր— ապահովել գյուղատնտեսությունը առավելացույն արտադրության գործիքներով և միջոցներով, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի արագացնել և արագ շարժել նրա վերակառուցման գործը նոր տեխնիկական բազայի հիման վրա»։ (Ստալին. «Լենինի նիզմի խորհրդները», էջ 508—509)։

Ահա այս ներքին պայմանները, վորոնք թելակրում են մեզ վարելու ինդուստրիալի և առաջին հերթին ծանր ինդուստրիալի արագութեմով գարգացման քաղաքականությունը:

ՎՈՐՈՆՔ ԵՆ ՄԵՐ ԻՆԴՈՒՍՏՐԱՅՄԱՆ ԱՐԱԿ ՏԵՄՊԵՐԻ ԻՐԱԿԱ-  
ՆԱՅՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Այժմ հարց ե ծաղում, թե արդյոք Հնաբավիշը ե զարկացման մեր գանկացած արագ տեմպերը իրականացնել: Հնգամյակի յերկու տարվա արդյունքները մեզ առում են այն մասին, վոր վոչ միայն հնարավոր ե 5-ամյա պլանը կատարել հինգ տարում, այլ ընդհանուր առջամբ Հնգամյակն իրագործելի յե 4 տարում: Ինչ վերաբերվում ե ծանր արդյունաբերությանը, այդ առաջարկում Հնգամյակը իրականացվում ե նույնիսկ 3 և կես տարում (արդեն հավարժունաբերությունը և մի շարք խոշոր ձեռնարկություններ իրականացրել են Հնգամյակը իրեկու ու կես տարում):

Հարց ե ծաղում : Ո՞ւր պիտի փնտրել պատճառները մեր դար-  
դացման այդ՝ մասնավորապես կապիտալիստական սխալեմի հա-  
մար միանդամայն անհնարին—արար տեմպերի : «Պատճառը խոր-  
շրդային սխալեմի առավելությունների մեջ ե կապիտալիստական  
սխալեմի նկատմամբ : Ինչպես նաև բանկոր գառակարգի և նրա  
կուսակցության լենինյան պայքարի տեսակերի համար : Ինչ բան  
և տնտեսության խորհրդային պահեմը :

- Կապիտալիստների դաստիարակի իշխանությունը տապալված
  - և փոխարինված բանվոր դաստիարակի իշխանությամբ:
  - Արտադրության գործիքները և միջնորդները՝ հողը, գործ

ծարանները, ֆարբիկանները և այլն, իդված են կտոր՝ ուսմանները և հանձնված են բանվոր զասակարգի և զյուղացիական աշխատավորական մասսաների սեփականությանը:

3. Արտադրության զարգացումը հպատակեցված և վոչ թե մրցության և կապիտալիստական շահույթի ապահովման սկզբունքին, այլ պլանային զեկավարության և աշխատավորության նյութական ու կուլտուրական մակարդակի սիստեմատիկ բարձրացման սկզբունքին:

Ժողովրդական յեկամտի բաշխումը կատարվում և վոչ թե շահագործող և նրանց բազմաթիվ պարագիտական դասակարգերի ոգտին, այլ բանվորների և զյուղացիների նյութական դրության սիստեմատիկորեն բարձրացման ոգտին և հոգուտ քաղաքում և դյուլում սոցիալիստական արտադրության լայնացման:

5. Աշխատավորության նյութական դրության սիստեմատիկ բարելավումը և նրանց պահանջների անընդհատ աճումը (գնողունակությունը), վորը լինելով արտադրության լայնացման աճող աղբյուրը, աապհովում և բանվոր դասակարգին գերարտադրության կրիզիսներից, գործազրկության աճումից և այլն:

6. Բանվոր դասակարգը հանդիսանում է յերկրի տերը, վորն աշխատում և վոչ թե կապիտալիստների համար, այլ իրեն, սեփական դասակարգի համար» (Ստալին, 16-րդ կու. համագումար, քաղ. Հաշվետվություն. էջ 57):

Ծնորհիվ այն հանդամանքի, վոր մեր խոշոր արդյունաբերությունը կազմում և պրոլետարական պետության սեփականությունը, վոր նա կենտրոնացված է, վոր տրանսորդուրը, վարկային սիստեմը, արտաքին առևտուրը, ներքին մեծածախս առևտուրը, նմանապես գոտնվում են պրոլետարական պետության ձեռքին, վոր յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական սեկտորը արդեն գրավում է գերակշռող և հեգեմոն դեր, շնորհիվ, այս հանդամանքի, մեր յերկրի սլորդատարիատը իր ձեռքին ունենալով նաև պետական իշխանությունը՝ տնտեսական կյանքը արամագծորեն հակառակ կապիտալիստական արտադրության և բաշխման յեղանակների վարում և պլանային յեղանակով: Մեր տնտեսությունը հատուկ չի կապիտալիստական անարթիան և մրցությունը: Կապիտալիստական արտադրական ուժերի դյուլը կառարգում է վոչ թե պլանային յեղանակով, այլ տարերային: Նրանց զարգացման հիմքում ընկած է ձգում դեպի շահի ամելի մեծ մասսա ձեռք բերելու (հարաբերական հավելյալ ար-

ժեքի ստացումն և, վոր կաղմում և խթանը տեխնիկայի զարգացման) պահանջը:

Կապիտալիստական հասարակայնությանը բնորոշ և այն հակառակությունը, վոր գոյություն ունի աբտագրության հանրային բընույթի և նրա արդյունքի մասնավոր յուրացման միջև: Գնողունակային պահանջը հետ և մնում արտադրության զարգացումից: Այս հակառակության սրումն է, վոր բերում է կապիտալիստական գերարտադրության ճնշաժամերին, իսկ այդ ճնշաժամերը ավերիչ աղղեցություն են ունենում յերկրի տնտեսության վրա ու մասնավորապես շահագործող դասակարգերի համար: Քանի վոր կապիտալիստական տիրապետությունը մեզ մոտ տապալված է, ուստի վերացված և նաև այդ հակառակությունը (արտադրության հանրային բնույթի և նրա արդյունքի մասնավոր յուրացման միջև): Կը անից բղխող տնտեսական ճնշաժամը: Մեզ մոտ, ինչպես ընկ. Ստալինն է մատնանշում, արտադրության աճմանը զուգընթաց աճում և նաև աշխատավորական լայն մասսաների պահանջը (գնողունակությունը):

Մեր տնտեսության պլանայնությունը միաժամանակ հնարավորություն և տալիս իշեցնել արտադրանքի ինքնարժեքը, վոչ արարագրական ծախսերը, ուսցինալացում կատարել, ներքին միջոցները և հնարավորությունները լրիվ մորիլիստացիայի յենթարկել: Մեզ մոտ չնորհիվ այն հանդամանքի, վոր վերացված և հողի մասնավոր սեփականությունը և կալվածատիրական հողատիրությունը, դրա հետևանքով գոյություն չունի այն բացարձակ ունակություն, վոր կապիտալիստական սիստեմի պայմաններում արգելք եր հանդիսանում գյուղատնտեսության արտադրական ուժերի զարգացմանը: Մեզ մոտ վերացված են այն վոչ արտադրական ծախսերը, վորոնք գնումը եյին աղինականության, հողեվորականության և պորտարույժների ահագին մասսայի պահպանման համար և բուրժուազիայի շուալ կյանքի ծախքերը հոգալու համար:

Այդ ամբողջին յեթե այլեւացնենք այն գլխավորը, վոր իշխանության գլուխ կանգնած են բանվորագյուղացիական մասսաները՝ կոմունիստական կուսակցության բայլենիկյան զեկավարությամբ, և անառելի ենոտուզիազմով լծվել սոցիալիստական շինարարության դորձին, վոր որ-որի վրա աճում և մասսաների արտադրական նախաձեռնությունը՝ սոցմրցում, հարվածայնություն, հասարակական բուրժուազիական արգավիճական, բանվորական պայմանների այն

Հանրագումարը, վոր հնարավոր և դարձնում մեր յերկրի սոցիա-  
լիստական ինդուստրացման արագածեմպ զարգացումը և տեխնի-  
կա-տնտեսական տեսակետից այն ճանապարհը, վոր անցել են  
առաջավոր կապիտալիստական յերկրները 50-100 տարում, կըտ-  
քելու մաքսիմում 10 տարում:

ՄԵՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ ԴԱՆԴԱՂԵՑՆՈՂ ՖԱԿՏՈՐՆԵՐ

Սակայն սիսալ կլիներ կարծել, վոր մեր արագածեմպ սոցիա-  
լիստական ինդուստրացման ճանապարհը միանդամայն հարթ ե և  
և չկան դժվարություններ ու զարգացման տեմպերը դանդաղեց-  
նելու ֆատկորներ:

Տեսնենք, թե վորոնք են այն Փակտորները, վոր հանդես են  
դալիս մեր սոցիալիստական շինարարության և առանձնապես ին-  
դուստրացման քաղաքականության իրականացման ժամանակ, եր-  
բեկ տեմպերը դանդաղեցնող Փակտորներ:

Նախ և առաջ ի նկատի պետք ե ունենանք մի հանդամանք, վոր  
մեր ժողովրդական տնտեսության վերակառուցումը լոկ նրա տեխ-  
նիկական բաղայի վերակառուցումը չե, այլ հանդիսանում է միա-  
ժամանակ սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերակառու-  
ցում, այս հանդամանքը մասնավորապես վերաբերում է մեր գյու-  
ղատառությանը: Քանի, վոր գյուղատնտեսության մեջ նշանա-  
կալից տեղ ունի դեռևս մանր արտագրությունը, վորի տեխնիկա-  
կան վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով պահանջում  
է նախ և առաջ սոցիալական հարաբերությունների վերաբերումը  
սոցիալիստական հիմունքներով: Ահա այս մանր արտաղրության  
գոյությունն ե իր հետամնաց տեխնիկայով և իր զարավոր սովո-  
րություններով, վոր հանդիսանում է մեր ինդուստրացման զար-  
գացման տեմպը դանդաղեցնելու Փակտորներից մեկը: Չե՞ վոր  
մենք արգեն մասնանշեցնք, վոր հենց այդ մանր արտաղրության  
գոյությունն ե, վոր ամեն որ և ամեն ժամ ծնում և սնուցանում  
է կապիտալիզմը և կապիտալիստական արտաղրական հարաբե-  
րությունների մնացորդները մեր յերկրում:

Յերկրորդ և հիմնական Փակտորը մեր զարգացման տեմպերը  
դանդաղեցնող այն ե, վոր մենք դեռևս գտնվում ենք կապիտալիս-  
տական շրջապատման մեջ: Կապիտալիստական շրջապատը, վորն  
ամեն լուսե պատրաստվում է հարձակվել մեզ վրա, տնտեսական  
ոմեն տեսակի հնարավոր և անհնար միջոցների յերեսում դանդա-  
ղեցնելու և վիժեցնելու համար մեր յերկրի սոցիալիստական ին-

դուստրացումը և նրա արագատեմպ զարգացումը: (Զարաբաս-  
տիկ «Եեմպլինդը», «Հարկադրական աշխատանք», մեր եքսպորտի  
ոկտ ուղղված որենքների հրատարակում, ինտերվլինցիայի նախա-  
ւատրաստում և այլն): Իհարկե այդ բոլոր միջոցների դեմ մենք  
ունենք նաև մեր հակամիջոցները, բայց վրա դեռ այսոր ել կապի-  
տալիստական շրջապատի այդ ճնշումը տարբեր ձեվերով և մեթոդ-  
ներով անդրադառնում ե մեր առաջնորդացի տեմպերի վրա այս  
կամ այն չափով, այդ կապիտալից գուրս ե:

Յերրորդ Փակտորը: Մեր սոցիալիստական ինդուստրացումը,  
վորը վերջնականապես խախտում է և արմատախիլ և անում մեր  
ժիրկում կապիտալիզմի հիմքերը, չեր կարող առաջ չբերել մեռ-  
նող կապիտալիստական տարբերի կատաղի դիմադրությունը ըս-  
կուած առանձին կուլակային տերրորիստական ակտերից և վերջա-  
ցած խորրագույն վնասարարություններով: Դրան, վորպես իլ-  
յուստրացիս կարելի յե թվարկել խոչոր վնասարարությունների  
շարանը՝ Շախտիի, տրանզպորտի, «Ուկրայնայի ազատության  
միությունը»—մատակարարման գործի (48-ի) «արդյունաբերա-  
կան կուսակցության», մենշևիկների (Գրոման-Սուլիանով) և  
«Աշխատավորական գյուղացիական կուսակցության» (կոնդրա-  
տով ՀՀՀինա) գործերը:

Այս խոչոր վնասարարական կարգակերպություններն իրենց  
նորութական և բարոյական ողնությունը ստանում եյին վերեփում  
մատնանշված կապիտալիստական շրջապատից, նպատակ ունենա-  
լով վերականգնել կապիտալիզմը Բուսաստանում: Այսպիսով կա-  
պիտալիստական դիմադրությունը և մասնավորապես վնասարա-  
րությունը չեն կարող մեր կողմից չդիտվել իբրև մեր զարգացման  
տեմպը զանդաղեցնող Փակտոր: Անհրաժեշտ ե դասակարգային  
զգոնությունը և աչալըջությունը վոչ միայն անմիջապես հայտ-  
նաբերելու, այլ և կանխելու վնասարարության ամեն մի նշան,  
վերացնելու նրա ազգեցության բոլոր մնացորդները մեր շինարա-  
րության բոլոր բնագավառներից:

Յերրորդ Փակտորը— վորը հանդես է գալիս վարպես հիմնա-  
կան խոչնառներից մեկը մեր սոցիալիստական ինդուստրացման  
արագատեմպ զարգացման՝ զա կազմերի պակասն և, մեր գեռ ևս  
կուլտուրական հետամնացությունը: Մի կողմից սոցիալիստական  
շինարարության որ ավուր աճող պահանջը և մյուս կողմից կա-  
պիտալիստական կարգերից մեզ անցած վորակյալ կադրերի և  
մասնավորապես բարձր վորակյալ մասնաշետների տղտագործման

Հնարավորությունների և նպատակահարմարության աստիճանա-  
կան նվազումը՝ կադրերի խնդիրը մեր զարգացման ներկա և առա-  
պում դարձնում են մեր ժողովրդական տնտեսության «հեղ տե-  
ղերից» մեկը:

Ավելին. բանվոր դասակարգից դուրս յեկած և «արտադրու-  
թյունը և տեխնիկային տիրապետող» կազմերի պակասը դեռ ևս  
այսոր ել նշանկալից չափով բացասաբար և անդրադասումը մեր  
հնարավորությունների լրիվ սուսագործման և ժողովրդական տըն-  
տեսության պլանների կատարման վրա: Այսուղից ել անհրա-  
ժեշտություն կուլտուրական հետամնացության գեմ՝ բոլոր  
գծերով վճռապես պայքարելու, նոր վորակյալ կադրերի պատ-  
րաստման դործը կազմակերպելու և «տեխնիկային տիրապետու»  
համար: Մենք քիչ հետո կտեսնենք, թե այդ ֆակտորներն ինչ նը-  
շանակություն են ունեցել մեր զարգացման տեմպերի վրա, սա-  
կայն կուսակցությունը վոչ թե նահանջել եւ այդ ֆակտորների  
սուած, այլ ինչ գլխավորն ե՝ բոլշևիկյան պայքար և մղել այդ  
խոչնշուածները վերացնելու համար: Զնայած այդ խոչնշուածներին,  
մենք այնուամենախիզ մեր սլքանային նախատեսումները կատա-  
րել և շատ զեպքերում ել գերակատարել ենք: Այդ արգելառիթ-  
ների վերջնական վերացումը հնարավորություն կտա ել ավելի  
ուժեղացնել մեր զարգացման տեմպերը:

Հինգերորդ ֆակտորը.— Զնայած կուսակցությունը մղած ուժեղ  
պայքարին ընդէմ բյուրոկրատիզմի՝ վերջինս դեռ այնուամենայ-  
նիվ վերջնականապես արմատախիլ չի արված: Բյուրոկրատիզմը և  
քաջըուկն անպայմանորեն խանգարում են մեր արագատեմպ զար-  
գացումը, ուստի կուսակցությունը պայքարում և վերջնականա-  
պես արմատախիլ անելու բյուրոկրատիզմը սոցիալիստական շի-  
նարարության բոլոր բնագավառներից և պարզեցնելու, ևժանա-  
ցնելու մեր ապարատը, կրնատելու վոչ արտադրական ծախսերը,  
ևժանացնելու շինարարությունը և այլն:

ԵՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՅԵՎ ԹԵՔՈՒՄՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒ-  
ԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻՑ

Դեռ անցյալ առաջարրություններից պետք և հայանի լինի,  
վոր աջերը չեն ընդունում նեպի յերկմիասնական բնույթը, նրանց  
կարծիքով նեպն առհասարակ ապահովում և սոցիալիզմի հաղ-  
թանակը մեր յերկում և այս հարցում ևս նրանք սիալ

բանելով լենինին՝ հանգում են այն թյուր տեսությանը, վոր կա-  
զիք չկա պայքարելու սոցիալիզմի հաղթանակի համար, քանի  
վոր նեպն ինքնըստինքյան արդեն ապահովում և մեր հաղթա-  
նակը:

Սակայն ինչպես միանգամայն ճիշտ կերպով մատնանշեց ընկ.  
Ստալինը մեր կուսակցության 16-րդ համարումարում՝ լենին  
ասել ե, վոր՝

«Տնտեսապես և քաղաքականապես նեպը լլովին ապահովում  
ե հեարավորությունը սոցիալիստական եկոնոմիկայի Փունդա-  
մենտի կառուցման»: Բայց հնարավորությունը դեռևս իրակա-  
նություն չի: Վորպեսզի հնարավորությունը զարձնենք իրակա-  
նություն, հարկավոր և աչքաթող չանել նեպի յերկմիասնական  
բնույթը, վորպես հակասությունների, հակադրությունների մի-  
ամսություն, մանր արտադրողների յերկյակ սոցիալիստական  
բնույթը և ընդհանրապես անցման ըջանի հակասությունները:  
Աջերը ընդունելով, վոր նեպը միանգամայն ապահովում և սո-  
ցիալիզմի հաղթանակը մեր յերկում միաժամանակ հանդը-  
ացնում են մեղ, վոր կարիք չկա պայքարելու հանուն ինդու-  
տրացման և կոլեկտիվացման արագ տեմպերի, նրանք գտնում  
չեն, վոր վոչ մի զեպքում մեղ մոտ չկան նախադրյաներ բանկուր  
գասակարգի և գյուղացիության զաշինքի խոժման, ուրիշ խոս-  
քով, նրանք տեսնում են գյուղացու միայն աշխատավորական դեմ-  
քը, իսկ այն, վոր այդ գյուղացին միաժամանակ սեփականատեր  
ե, այդ անտես և արփում աջերի կողմէց: Սակայն լենինը ասում  
եր, վոր «մեր տնտեսության մեջ անհրաժեշտարար չկան հե-  
տունքներ այդ գաշինքի խմբան, սակայն յեթե լուրջ դասակար-  
գային ապրանություններ առաջանան, ապա խղումը անխու-  
սափելի ե»: Այդպիսի զաշինքի խմբան հնարավորությունը լե-  
նինի կողմէց չի բացատվում: Սակայն վորպեսզի գաշինքի խղումը  
չինի և նեպի անտեսական ու քաղաքական հնարավորություն-  
ները սոցիալիզմի կառուցման՝ զարձնենք իրականություն, ան-  
հօգածեց և կուսակցության կողմէց վարել ճիշտ քաղաքականու-  
թյուն:

Վոր կուսակցության քաղաքականությունը յեղել և ճիշտ,  
այդ մասին վկայում ե սոցիալիստական շինարարության հնգամ-  
րակի յերկու և կես տարվա արդյունքները, միջազգային և ներ-  
քին հականեղամբոխական կապիտալիստական տարրերի անպանա-  
կան վախը և պայքարը հանդեպ հնդամյակի և նրանց ակտիվի յե-

լույթները։ Սակայն մեր կուսակցությունն այդ ամենը ձեռք է բերել վճռական պայքարի գնով։ Մոցիալիստական շնչարաբության հաղթական առաջնութացի ճանապարհին ընկած բոլոր խութերի և նրանց կրողների մեկուսացման և նրանց հաղթահարման ճանապարհով։

Ազերի գլխավոր սիսալներից մեկը հենց կայանում է, նրանում, վոր նրանք չեն տեսնում այդ պայքարը՝ ալիքի ճիշտ նահանջում են այդ պայքարից՝ տեղի տալով գասակարգային թրշնամու դիմադրության՝ «ինքնահոսին» հանձնելով համատարած Փրոնտով սոցիալիստական արշավի պատրաստման գործը —ինչպես տեսության մեջ, նույնպես և պրակտիկայում։

Այս թե ինչպես ե բնորոշում աջ ուկոնիստներին ընկ. Ստալինը, կուսակցության 16-րդ համագումարում։

«Աջ ուկոնիստների մասին չի կարելի տաել, վոր նրանք չեն ընդունում ԽՍՀՄ սոցիալիզմ կառուցելու՝ հնարավորությունը... Սակայն աջ ուկոնիստների գժրախտությունն այն է, վոր ձնվականորեն ընդունելով մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորությունները չեն ուզում ընդունել պայքարի այն ուղիները և հնարավորությունները, առանց վորոնց կարելի յե կառուցել սոցիալիզմը։ Նրանք չեն ուզում ընդունել, վոր ինդուստրիալիստ ըստ ամենայնի զարգացումը հանդիսանում ե ժողովը դական ամբողջ տնտեսությունը սոցիալիզմի հիմունքներով վերակառուցելու բանալին։ Նրանք չեն ուզում ընդունել գասակարգային անհաջող պայքարը կապիտալիստական տարրերի դեմ, սոցիալիզմի ծավալուն արշավը կապիտալիզմի վրա։ Նրանք չեն հասկանում, վոր այդ բոլոր ուղիները և միջոցները հանդիսանում են այն ձեռնարկումների սիստեմը, —առանց վորոնց հնարավոր և պահպանել պրոլետարիատի դիկտատորան, կառուցել սոցիալիզմը մեր յերկրում։ Նրանք կարծում են, վոր սոցիալիզմը կարելի յե կառուցել սուս ու փուս, ինքնահոսի յեղանակով, առանց դասակարգային պայքարի, առանց արշավի կապիտալիստական տարրերի վրա։ Նրանք կարծում են, վոր կապիտալիստական տարրերի վրա։ Նրանք կարծում են, վոր կապիտալիստական աննկատելի կերպով, կոմ կներածեն սոցիալիզմի մեջ և վորովհետեւ պատրության մեջ այդպիսի հրաշքներ չեն պատահում, ուստի դուրս և գալիս, վոր աջ ուկոնիստները իրոք գլորվում են գեղի այն տեսակետը, վոր ժխտում և սոցիալիզմի կառուցման հնարավորությունները մեր յերկրում...։ Նրանք չեն ուզում ընդունել, վոր խորհրդային տնտե-

սությունները և կրլտնտեսությունները հանդիսանում են գյուղացիական հիմնական մասսաներին սոցիալիզմի կառուցմանը մասնակից անելու հիմնական միջոցը, հիմնական ուղին։ Նրանք չեն ուղում ընդունել, վոր առանց կենսագործելու կուլտկությունը վորպես գասակարգի վերացման քաղաքականությունը, հնարավոր չե իրագործել գյուղի վերակառուցումը սոցիալիզմի հիմունքներով։ Նրանք կարծում են, վոր գյուղը կարելի յե սոցիալիզմի ուկաների վրա զնել սուս ու փուս ինքնահոսի յեղանակով, առանց գասակարգային պայքարի, միմիայն հայթայինուղ և սպառողական կոռպերացիայի միջոցով, վորովհետեւ համոզված են, վոր ներկայումս դիմավորը վոչ թե ինդուստրիալի, կոլտնտեսությունների և խորհունտեսությունների զարգացման բարձր տեմպն է, այլ այն, վոր «արձակենք շուկայական տարերքը, ազատություն և անհատական տնտեսություններից մինչեւ գյուղի կապիտալիստական տարերքի կապիտալիստական տարերքի կապանքները քակենք»։ (Ստալին. 16-րդ կուս համադրումարի քաղհաշվիտությունը)։

Այդ ամենից գժվար չե յեղակացնել, վոր իրականում աջերը դեմ են ինդուստրացման և առաջին հերթին ծանր ինդուստրիալի գարգացման արագ տեմպերին։ Ընկ. Թիկովը, վոր աջ թեքման նախկին պարագլուխներից և, առարկում եր 5-ամյա ինդուստրացման պլանին և հակագրում եր իր յերկամյակը, վորն իրականում տանելու յեր մեղ ազգարային ճանապարհուղ և նպաստելու յեր կապիտալիզմի վերականդնմանը մեր յերկրում։ Իսկ ընկ. Բուխարինը իր «Ճնշեսազետի գիտողություններ» բբոշյուրում գրում եր, վոր «ողից չենք կարող կառուցել գործարանային շենքեր և բնակարաններ»։

Այսպիսով աջերը չելին հավամյակի իրականությանը և բանվոր գասակարգի ուժին յերկրի արագատեմպ ինդուստրացման գործում։

Զարգանց հատկանշական է, վոր բուրժուական տնտեսակետների տեսակետները մեր ինդուստրացման տեմպերի նկատմամբ ըստ եյտթյան գրեթե նույն է, ինչ վոր աջերինը։ Նրանք «գիտակցորեն» ճգնում ելին ապացուցել, վոր հասրակական աշխատանքի համաշխարհայիմն բաշխումը «անհնարին է» զարձնում ինդուստրացման (և առաջին հերթին ծանր ինդուստրիալի) արագատեմպ զարգացմանը մեր յերկրում։ Տարբերությունն այն է, վոր բուրժուացիներին ավելի անմիջականորեն և ամենայն հետևողականությամբ փորձում ելին

դործնական՝ վնասարարական ձեռնարկումներով «իրացնել» իւսնչ  
այս մտավոր գեղումները՝ — հետ տաճել մեր շերկերը դեպի կապի-  
տալիզմ :

Այս ամենը պետք է, վոր ցայտուն դարձնի աջերի տեսակետ-  
ների վտանգավորությունը ինդուստրացման տեմպերի հարցում :

Այժմ տնանենք, թե ինչ դիբք ունելին արոցկիստները, հան-  
գեպ մեր ինդուստրացման բարձր տեմպերին :

«Տրոցկիստների մասին կա այն կարծիքը, մուշ նրանք դերին-  
գուստը իսկաներ են : Այդ կարծիքը, ճիշտ և միայն ժամանքը, այդ-  
էիտ և այնքան, վորքան խոսքը վերաբերում և վերականգնման  
չքանի վերջին, յերբ արոցկիստները իրաք զարգացնում ելին  
գերինդուստրիալիստական ֆանտազիաներ, իսկ ինչ վերաբերում  
և վերակառուցման չքանին, արոցկիստները տեմպերի տեսակե-  
տից ամենածայրահեղ մինիմալիստներ են, ամենախղճալի կապի-  
տալիզմությունը» (Ստալին, 16 կուտ. համագումարի քաղհաշվե-  
տությունը) :

Ընկ. Ստալինի այդ բնութագրությունը միանդամայն համա-  
պատասխանում և Տրոցկու թե ներկա գրվածքներին—ինդուս-  
տրացման տեմպերի հարցում — թե արոցկիստների ամբողջ գոր-  
ծելակերպին և թե նրանց կողմից պաշտպանություն գտնող «իջ-  
նող կորագծի տեսությանը» :

Տրոցկին իր գրվածքներում, բյուլետեններում և բուրժուա-  
տան թղթակիցներին արվող ինտերվյուններում ժիանդամայն քա-  
ցահայտ կերպով գեմ և գուրս զալիս մեր ինդուստրացման ներկա  
արագետմայ զարգացմանը՝ «Յամ յակը 4 տարում» լողունգին:  
Տրոցկիստները դեմ են նաև կարճ ժամանակումիջոցում առաջտ-  
վոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու լոգուն-  
գին: Նրանք գեմ են գուրս զալիս համատարած կուեկտիվացման  
և դրա հիման վրա կուլակությանը վորայես գասակարդ լիկվիդա-  
ցիայի յենթարկելու քաղաքականությանը: Մի խոսքով այժմ հա-  
ճախ դժվար է լինում տարբերել աջ ռազմունիստի գրածը արոց-  
կիստական «ձախ» հայտարարություններից: Իղուր չեր, վոր  
16-րդ կուտ համագումարում ընկ. Ստալինը քաղհաշվետվության  
մեջ մատնանշեց, վոր — «աջ ուկլոնիստները իրենց աքրորակուիլը  
արոցկիստների դեմ սովորաբար պասկում են քարագույրի հետեւ  
արոցկիստների վարելով արոցկիստների հետ, նբանց հետ  
ըլուկ կազմելու մասին»:

Ինդուստրացման արագատեմայ զարգացումը առահովելու հա-

մար տնհբաժեշտ և արագ ոլայքար ինչպես աջ, այնպես և Համայնք»  
սովորունիղմի զեմ վորպես թշնամի դասակարգի ագենտուրան  
մեր կուսակցության մեջ, զվարակոր շտանդ ներկա ետապում հա-  
մարելով աջը, քանի վոր նա որյեկտիվորեն ներկայանում և փոքրվ  
կուլտուրան ազենտուրան :

Մեր յերկրի ինդուստրացման արագ տեմպերը պարզ պատկե-  
րացնելու համար անհրաժեշտ եմ համարում բերել մի շարք բար-  
կան ավալներ մեր ինդուստրիայի զարգացման տեմպերը ընու-  
թագրող և համեմատել այդպիսին կապիտալիստական յերկրների  
պարզացման տեմպի հետ :

Հետեւյալ աղյուսակը ակնահայտնի կերպով ցույց է տալիս  
կարեվորագույն կապիտալիստական յերկրների զարգացման տեմ-  
պերը՝

1928 թ. արդյունաբերության արտադրանքը ընդունենք 100.

	Միաց- նանդ	Անգլիա	Գերմա- նիա	Ֆրան- սիա	Լինաու- ստան
1928 թ. . . . .	100	100	100	100	100
1929 թ. . . . .	106,3	107,9	101,8	109,4	99,8
1930 թ. 1-ին յեւանս.	95,5	105,1	93,4	113,1	84,6
» 2-րդ »	93,1	98,0	90,8	124,4	80,9
» 3-րդ »	83,4	87,3	82,2	109,0	82,2

Յեթե վերցնելու լինենք ԽՍՀՄ-ի արդյունաբերական արար-  
դանքը 1926—27 թ. ապա կտեսնենք, վոր այն հավասար եր 1913  
թ. արտադրանքին: Հետեւյալ աղյուսակը ցույց է տալիս մեր ար-  
դյունաբերության արտադրանքի զարգացման տեմպը.

1926-27	100
1927-28	127,4
1928-29	158,6
1929-30	200,0

Ուրիշ իսուքով 1920—30 թ. մեր արդյունաբերական արտա-  
դանքը հավասար է յեղել 1913 թ. և 1926—27 թ. արտադրան-  
քի կրկնակին, իսկ 1921 թ. վերջում այդ արտադրանքը 1913  
թ. համեմատությամբ յեռապատկելու յե:

Վերօհիցյալ յերկու աղյուսակները ակնհայտ կերպով ցույց  
են տալիս մեր զարգացման բուռն տեմպերը, մեր տնտեսական  
վերելքը մի կողմից և կապիտալիստական յերկրների կրկնակի  
հարացումը մյուս կողմից:

Հնգամյակի յերկու տարվա արդյունքները ցույց են տալիս,  
վոր հնդամյակի առաջադրությունները այդ յերկու տարվա հա-  
մար կատարված են խոշոր զերազանցումով:

1929—30 թ. մեր պետական խոշոր արդյունաբերությունը

աճել և 25 տոկ. նախատեսված՝ 20 տոկոսի փոխարեն, տալով արտադրանք 30,5 միլիարդ ռուբլու (29,3 միլիարդի փոխարեն), իսկ ծանր ինդուստրիան հնդամյակի առաջին յերկու տարում 12,5 միլիարդի փոխարեն տվեց 13,8 միլիարդի արտադրանք։ 1931 թ. համար ժողովրդատնտեսական պլանով (կոնտրոլ թվերով) նախատեսված է հիմնական շինարարության աշխատանքների ծագալը 7,470 միլիոն ռուբլու, (վորից 870 միլիոն եւեկտրոֆիկացիային), իսկ արտադրանքի աճումը՝ 1930 թ. համեմատությամբ լինելու յի 45 տոկ. (1930 թվին 1929 թվի համեմատությամբ աճումը 25 տոկ. և յեղել)։ Այդ նշանակում է, վոր հընդամյակի յերրորդ տարում հնդամյա պլանը արդյունաբերության արտադրանքի կատարվում է ծանր ինդուստրիայի ճյուղերում 98 տոկոսով։ Այդ նշանակում է, վոր մենք այս տարվա պլանը կատարելով ավարտում ենք սոցիալիզմի տեխնիկո-տնտեսական ֆունդամենտի կառուցումը։

Սոցիալիզմի մատերիալ տեխնիկական բաղայի աճման հիման վրա և առաջին հերթին շնորհիվ մեր խոչը սոցիալիստական ինդուստրիայի վերակառուցման, վոր հիմք ծառայեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, շնորհիվ այդ հանդամանքների մեր յերկրում առաջ յեկան տարբեր տնտեսաձեկերի (յուլաց) արմատական փոփոխություն հողուասոցիալիստական սեկտորի բացարձակ գերակշռության, վորը արդեն իր ձեռքին տւնի ժողովրդական տնտեսության բոլոր առաջատար լծակները։

## II ԻՆԴՈՒՍՏՐԱՅՈՒՄԸ ՅԵԿԱՆԱԿԱՆ ԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր ձեռք բերած հաջողությունների հետ զուգընթաց մենք ունենք նաև տնտեսական զգալի դժվարություններ, վորոնց չի կարելի թերագնահատել, այլ անհրաժեշտ է լրջորեն հաշվի առնել և վորը զիլիավորն ե՝ ակտիվ պայքարել այդ դժվարությունների հաղթահրժման համար։

Տեսնենք, թե վորոնք են այդ դժվարությունները և ուր պիտի փնտրել նրանց պատճառները։ Մենք հին ցարական Ռուսաստանից ժառանգություն ստացանք տեխնիկապես-տնտեսապես քայլքայլած յերկիր, վորն ել ավելի քայլքայլեց քաղաքացիական պատերազմների ընթացքում։

Վերականգնման շրջանի ավարտումով մեր տնտեսության մակարդակը հասցրինք նախապատերազմյան շրջանի մակարդակին,

դարձացնելով այն բոլորովին այլ տիպի արտադրական հարաբերությունների հիման վրա։

Խորհրդային իշխանության յերդվյալ թշնամիներն արտասահմանում և նրանց ազենաները մեր յերկրում ցանկանում ելին բացարձիւ, վոր հենց այս վերջին հաղամանքն ե (նոր տիպի արտադրական հարաբերությունների ստեղծումը մեր յերկրում) գլանավոր պատճառը տնտեսական այն դժվարությունների, վոր ավելի քան յերբեք իրեն զգալ տվեց վերականգնման շրջանի վերջում։ Սակայն այդպես մոտենալ մեր տնտեսական դժվարությունների վերլուծությանը, այդ կնշանակի լավագույն դեղոքում անընդունակ լինել հասկանալու նախահեղափոխական Ռուսաստանի զարդացման առանձնահատկություններն, ըմբռնել այն հիմնական հակասության իմաստը մեր եկոնոմիկայում՝ վոր վորպես ժառանգություն մնացել եր պլրութարիատին Հոկտեմբերյան Հեղափոխության հետեւականքով։ Ինչ խոսք այն մասին, վոր մեր շնչտած հակասության արմատները առաջին պետք ե փրկություն այն դեպքության մեջ, վոր գյուղատնտեսության միջև։ Այսպես յեթե համեմատելու լինենք 1920—21 թվից մինչև 1926—27 թ. մեր գյուղատնտեսության մասական և արդյունաբերական արտադրանքը, պատահենքն, վոր մեր գյուղատնտեսության արտադրանքը 26—27 թվին 20—21 թ. համեմատությամբ աճել եր 67 տոկ., այն ինչ արդյունաբերական արտադրանքը այդ նույն ժամանակամիջոցում աճել է 321 տոկոսով։ Էնայած այն հանդամանքին, վոր վերականգնման շրջանում այնպահանջման գործառնության արտադրանքի մասնակիության արտադրանքը 8,43 միլիարդ ռուբլի։

Արդյունաբերական արտադրանքի ամենազարգացած բնակչություն մասան գերազանցում եր արդյունաբերական արտադրանքի ընդհանուր մասսայից։ Դրանումն ել հենց կայանում ե Ռուսաստանի տնտեսության պատմականութեն առաջ յեկած հետամնացությունը և աղբարային բնույթը։ Մինչ պատերազմյան (1913 թ.) Ռուսաստանի գյուղատնտեսական արտադրանքը կազմում եր 11,61 միլիարդ ռուբլի, իսկ արդյունաբերական արտադրանքը 8,43 միլիարդ ռուբլի։

Արդյունաբերական արտադրանքի ամենազարյա ամբողջ մասան էր քաղաքային բնակչության կողմից և հենց իրեն, արդյունաբերության ներսում։

Մյուս կողմից գյուղացիության համարյա ամբողջ մասան էր ստացվածքի մեծագույն մասը վճարում եր իբրև կապաւա-

զարձ և հարկ, վորի հետեւ անքոյլ պահասում եր սրա զնողուակային պահանջը՝ արդյունաբերական ասլրանջների նկատմամբ։ Քանի վոր ուստական արդյունաբերությունը չեր կարողանում այսուամենայիվ բավարարել գյուղատնտեսության պահանջը, ուստի արդյունաբերության ապրանքների այդ պահանջը ծածկում եր արտասահմանից ներմուծումով։ Այդ իսկ պատճառով գյուղատնտեսության և արդյունաբերության միջև գոյություն ունեցող դժուպոպորցիան մինչպատերազմյան Ռուսաստանում ծածկվածքողական պարագաների պահանջը։

Խորհրդային պայմաններում, յերբ արդեն քաղաքական և տրնտեսական պայմաններն այլ եյին (գործարանները բանվոր դասակարգի պետության եր պատկանում, կալվածատիրական հողատիրության վերացում, մասսաների պահանջի աճում, գյուղացիական վճարումների հսկայական նվազում), այդ քանակային տարբերությունը գյուղատնտեսության և արդյունաբերության միջև չեր կարող չարտահայտել իրեւ բացահայտ դժուպորցիա։ Վերականգնման ըրջանի սկզբնական տարիներում այդ դիսպրապորցիան այնքան բացահայտ չեր զգացվում, քանի վոր մի կողմէց վերականգնվող և ընդլայնվող արդյունաբերությունը պահանջում եր գյուղատնտեսական հում նյութ և տալիս եր նրան (գյուղատնտեսությանը) պատրաստի ապրանքներ։

Մյուս կողմէց շուկա հանվող գյուղացիական պրոդուկցիայի քանակն ավելի սահմանափակ եր, քանի վոր գյուղացիական անհատական, մանր ապրանքային տնտեսություններն այդ ըրջանում զբաղված եյին վերազանցապես վերականգնելով ուղղական կոմունիզմի և նեպի սկզբնական տարիներին սպառոված պատարների վերականգնումով։

Վերականգնման ըրջանի ավարտման նախորեյին մեր կուսակցությունն արդեն տեսնում եր, վոր եկոնոմիկայի այդ հակասության վերացումը ամենից առաջ պետք ե վնարել սոցիալիստական ինքուստրացման մեջ, վորն ընդունակ լինի վերափոխել նաև գյուղատնտեսությունն, ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի դարձացումն այնպիսի կապակցությամբ, վորն անկարող լինի վտանգել մեր սոցիալիստական ինքուստրացման տեմպերը՝ մասնավորապես վերակառուցման ըրջանում։

Այդ իսկ պատճառով հրատապ խնդիր եր դրվում գյուղատնտեսությունը տանել սոցիալիստական արդյունաբերության հետեւց։ Ապահովել գյուղատնտեսության արտադրության համար

նմանապես դարձացման համապատասխան բարձր տեսչպես, ամեն կերպ ոժանդակելով մանրաբուադրողներին սոցիալիստականորեն վերափոխելու գործիքն։

Մենք այս ամբողջ համաշխարհային պատմական նշանակություն ունեցող գործի իրականացումը հարկադրված ենք իրականացնել մեր և միայն մեր միջոցներով։ Բացի այդ, մենք սոցիալիզմի կառուցումը կատարում ենք կապիտալիստական ողակման և ներքին դասակարգային թշնամիների կատարի դիմադրություն պայմաններում։ Այս հանգամանքը բնականաբար պիտի անդրադարձանական ուղղության վերաբարությունների վրա նրան որմանը նպաստելու ուղղությամբ։

«Դժվարությունների մասին մեղ մոտ բոլորն են խոսում։ Սակայն վոչ բոլորն են պարզ հաշիվ տալիս իրենց այդ դժվարությունների մասին։ Նախ և առաջ անհրաժեշտ ե հաշվի առնել այն հանգամանքը, վոր մեր այժմյան գծարարությունները վերակառուցման ըրջանի դժվարություններ են... Այդ նշանակում ե, վոր նրանք արմատապես տարբերվում են չեր տնտեսության վերականգնման ըրջանի դժվարություններից։ Յեթև վերականգնման ըրջանում խոսվում եր գործարանները բեռնավորելու, դյուզատնետեսությանը նրա հին բաղայի վրա ողնելու մասին, ներկայումս խնդիրն այն ե, վոր արմատապես վերափոխենք, վերակառուցենք թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը վիտիկելով նրանց տեխնիկական բազան, զինելով նրանց նոր տեխնիկայով։

Այդ նշանակում ե, վոր մեր առաջ դրված ե ժողովրդական տնտեսության տեխնիկական ամբողջ բազան վերակառուցելու խնդիրը, իսկ այդ պահանջում ե նոր, ավելի խոշոր ներդրումներ ժողանտեսության համար, ավելի փորձված նոր կադրեր, վորոնք ընդունակ լինեն՝ տիրապետելու նոր տեխնիկան, առաջ տանելու նրան։ Ենթարկության պետք ե նկատի ունենալ այն հանգամանքը, վոր ժողովրդական տնտեսության վերակառուցումը չի սահմանափակում նրա տեխնիկական բազայի վերակառուցմանը, այլ զրա հետ միասին պահանջում ե վերակազմել սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Այստեղ յես նկատի ունեմ գլխավորապես գյուղատնտեսությունը... Գյուղատնտեսության տեխնիկական բազան հարաց չեր չի վերակառուցել, առանց վերակառուցելու միաժամանակ սոցիալ-տնտեսական հին կարգերը, առանց մանր տնտեսությունները միացնելու, խոչոր կոլեկտիվ տըն-

տեսություններ կազմելու, առանց արմատախիլ անելու կապիտա-  
լիզմը գյուղատնտեսությունից : Հասկանալի յէ, վոր այդ հան-  
դամանքները չեն կարող ըբարդացնել մեր՝ դժվարությունները...

Յերրորդ . բուրժուական ինտելիգենցիայի վերնաշերտի շա-  
րամիտ վնասարարությունը մեր արդյունաբերության բոլոր աս-  
պարեզներում, կուլտկության գաֆանային պայքարը տնտեսու-  
թյան կուլտիվ ձեվի դեմ գյուղում, խորհրդացին իշխանու-  
թյան ձեռնարկումների սաբուաժն ապարատի բյուրոկրատական  
եկմենաների կողմից, վորոնք դասակարգային թշնամու ագեն-  
տուրան են, դրանք են ահա մեր յերկրի վերացող դասակարգի դի-  
մագրության դլխամփը ձեվերը :

Պարզ ե , այդ հանդամանքը չի կարող թեթելացնել մեր աշ-  
խատանքը ժողովրդական տնտեսության վերակառուցման ասպա-  
րեցում :

Չորրորդ . ապացուցված ե , վոր մասնագետների վնասարա-  
րությունը, կուլակության հակախորհրդային յելույթները, մեր  
ձեռնարկությունների հրդեհումները, և պայթեցումները, վար-  
կավորվում և վոգեջնչվում են դրսից... : Հասկանալի յէ, վոր այդ  
հանդամանքը նույնպես չի կարող հեշտացնել մեր վերակառուց-  
ման աշխատանքները» (Ստալին—Քաղ. հաշվետվություն 16-րդ  
կուս . Համագումարում) :

Ահա այս ե մեր ներկա դժվարությունների պատճառը :

«Սակայն մեր դժվարությունների բնորոշումը լրիվ չի լի-  
նի, յեթե ուշադրություն չդարձնենք նաև մի հանդամանքի  
վրա... Խոսքը վերաբերվում է նրան, վոր մեր դժվարություն-  
ները, վոչ քե անկման կամ կանգ առման դժվարություններ են,  
այլ անման դժվարություններ, վերելքի դժվարություններ, ա-  
ռաջխաղցման դժվարություններ են : Դա նշանակում է, վոր մեր  
դժվարությունները արմատական կերպով տարրերվում են հաստ-  
առաջատական յերկրների դժվարություններից... : Այդ նշանա-  
կում ե , վոր մեր դժվարությունները այնպիսի դժվարություննե-  
րներ են, վորոնք իրենք կրում են իրենց հաղթահարելու հեարակո-  
րությունները» (Ստալին) :

Այս բոլորից հետո հետեւում ե այն, վոր մեր տնտեսական  
ու պարենավորման (ապրանքային մասնակի սով և այլն) դժվա-  
րությունները բղխում են մեր դեռ ևս համեմատաբար հետ մնա-  
ցած յերկում սոցիալիստական վերակառուցման արագատեմպ  
ցած դժվարություններից, գյուղատնտեսության հետ մնալուց՝ արդյունա-  
դարդացումից :

Եերության համեմատությամբ և վերջինիս հանրայնացման համե-  
մատաբար ցածր աստիճանից : Հարց ե ծագում, վորն ե միջոցը  
այդ դժվարությունների վերացման :

Այնու առաջարկում են զանդաղեցնել մեր ինդուստրացման  
տեմպերը և առաջին հերթին զարգացնել թեթև ինդուստրիան,  
վորպես միջոց չուկայական հավասարակշուությունը պահպանե-  
լու և ապրանքային սովոր խուսափելու : Նրանք առաջարկում  
եյն այսպես կոչված «նեղ տեղերին հարմարվելու թեորիան» :

Ի՞նչ դուքս կզար, յեթե մենք ընդունելու լինելինք այդ ա-  
ռաջարկը : Այն, վոր մեր յերկիրը կդնար ադրաբացման ճանա-  
պարհով և կվերականգնելին կապիտալիստական հարաբերություն-  
ները մեր յերկիրում :

Կուսակցությունը հավատաբիմ մնաց բանվոր դասակարգի  
շահերին և զարկ տվեց ծանր ինդուստրիայի զարգացմանը, վորը  
բազա ծառայեց գյուղացիական մանր տնտեսությունների սո-  
ցիալիստական վերափոխման համար : Նեղ տեղերին հարմարվե-  
լու թեորիան, ճիշտ ե , ստեղծում ե չուկայական խիստ ժամա-  
նակավոր և չափաղանց անկայուն «հավասարակշուություն» (պահ-  
պանելով արդյունաբերության և գյուղատնտեսության դիսպլի-  
ուորցիան), բայց մեղ պետք ե արդյո՞ք այնպիսի «հավասա-  
րակշուություն», վորի պայմաններում միլիոնավոր գործադուրկ-  
ներ գոյություն կունենային, վորի հետեւանքով իրականում  
բանվոր դասակարգի դժվարությունը կվատթարանար, չհաշված  
նաև այն, վոր մենք այդպիսով կթաղելինք սոցիալիստական  
հաստակարգի կառուցման գործը և կվերականգնվեր կապիտա-  
լիզմը մեր յերկիրում :

Միակ յելքը դժվարություններից (վորը միստամանակ ուղին  
և սոցիալիզմի ֆունդամենտի կառուցման) դա սոցիալիստական  
ինդուստրիայի, առաջին հերթին ծանր,—արագատեմպ զարգա-  
ցումն ե :

«Նեղ տեղերի» ակտիվ վերացումն ե և վոչ թե նբանց պաս-  
սիվ հարմարվելը :

«Այդ դժվարությունների արագ և շուտափույթ վերացման  
հիմնական պայմանները հանդիսանում են սոցիալիստական շե-  
նարարության տեմպերի արագացումը և ծագմակումը  
կապիտալիստական տարրերի վրա ամբողջ հակատով» : (16-րդ  
կուս . Համագումարի բանաձեռ) :

«... դժվարությունների հաղթահարելու համար գոյություն

ունի միայն մի միջոց—կազմակերպել հարձակում կապիտալիստական տարրերի վրա ամբողջ Փրոնտով, մեկուսացնել մեր ունիքական շարքերում ոսորտունիստական տարրերին, վորոնք խանդարում են մեր հարձակմանը, վորոնք խուճապի մատնալած պատեպատ են զարնչում, վորոնք անվտահություն են մտցնում կուսակցության մեջ հաղթանակի նկատմամբ» (Ստալին, 16-րդ կուսամագումարում հաշվետվություն) :

Միաժամանակ պարենսավորման դժվարությունների վերացման ուղղությամբ 16-րդ կուս . համագումարը հրահանգեց ուշաբերություն դարձնել թեթև արդյունաբերության զարգացման վրա, շուտափույթ կերպով կազմակերպել անռանապահական (և առաջին հերթին խոզարուծական) խոչը տնտեսություններ, բարելավել մատակարարման գործը, սպառկուսպերացիայի ցանցը և այլն : Նույն հրահանգը տրվեց նաև Համեկի (բ) Կենակոմի և ԿՎՀ-ի միացյալ դեկտեմբերյան պլենումի կողմից : Այդ բոլորի հետ մեկտեղ մեր ինդուստրացման բնորոշ կողմը նորից մնում է այլ, վոր մենք չնայած այն փաստին, վոր ավելի քանի յերբեք հնարավորություն ունենք ծավալել թեթև արդյունաբերության զարգացումը, վոչ մի վայրից չենի դադարում ավելի զարկ տալ ծանր ինդուստրիային նրա զարգացման նպաստող նոր գիտանոներ և նոր բազա ստեղծելով և դրանից հետեւիցնում տնտեսական մնացած ձեռնարկումները, քանի վոր ծանր ինդուստրիայի (արտադրության միջոցների արտադրություն) զարգացումն է, վոր աղահովում և ինչ հարաբեր ինդուստրացման արագ տեմպը և տնտեսական դժվարությունների ակտիվ հաղթահարումը : Ահա թե ինչու վտանգավոր և և բացահայտորեն աջ տպորտունիստական այն տեսակետը, վորի համաձայն, մեր կապիտալ շնորհարաբությունը պիտի հարժարեցնել նեղ տեղերին, այսինքն՝ ժողովրդական տնտեսության հետ մնացող ողակներին :

### III. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՐԱԿԱՆ ՌՈՒՅՑՈՒՄԸ ՅԵԿԱՆԱԿԱՆ ԿՈՂԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Մենք տեսանք, վոր ինդուստրացումը հանդիսանում է Հիմնական միջոցը և բանալին մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար : Սոցիալիստական վերակառուցումը իրենից ներկայացնում է մի բարդ պրոցես, վորը իր մեջ ընդդրկում է հետեւյալ համական մոմենտները՝

ա) Տեխնիկայի վերակառուցում, վորի տակ մենք հասկանում ենք արտադրության պրոցեսի մեջ ավելի զարգացած մեքենաների ներմուծումը, վորը ապահովում է աշխատանքի բարձր արտադրուղականությունը : Դրա համար անհրաժեշտ է ծանր ինդուստրիայի և մասնավորապես խոշոր մեքենա-շինարարության գարգացումը : Այսպիսով ինդուստրացյումը միաժամանակ հանդիսանում է տեխնիկական վերակառուցման հիմնական միջոցը :

բ) Տնտեսական վերակառուցում . մենք ցարական Ռուսաստանից ժառանգություն ենք ստացել արտադրողական ուժերի և հիմնական կապիտալի այնպիսի բաշխում, վորը հատուկ եր թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության կապիտալիստական զարգացմանը, մասսաների ցածր գնողունակային պահանջին : Դրան պետք է ավելացնել նաև այն, վոր հիմնական կապիտալի աշխարհագրական բաշխումը և դասավորումը կատարված եր բնական հարաբերությունները տնտեսապես ոգտագործելու տեսակետից շատ աննպատակահարմար յեղանակով : Այդ իսկ պատճառով ժողովրդական տնտեսության արարեր ճյուղերի հարաբերության փոփոխումը, այն և առաջին հերթին արդյունաբերության միջևն ու արդյունաբերության և գյուղատնտեսության միջևն, այլ և աշխարհագրական նպատակահարմար բաշխումը հիմնական կապիտալի՝ հանդիսանում են հիմնական խնդիրը սոցիալիստական վերակառուցման : Իսկ վերակառուցման այս կողմը նմանապես անյերեւակայելի յէ առանց ինդուստրացման :

գ) Սոցիալիստական վերակառուցումը գյուղացիական հիմնական մասսաների դասակարգային վերաբերությունն է, վորը կատարվում է մասր գյուղացիական տնտեսությունները, խոչը կրեկտիվ տնտեսությունների վերակառուցելով, կապիտալիստական տարրերի վերացումով, քաղաքի և գյուղի միջն հակադրության աստիճանական վերացման միջոցով : Սոցիալ-դաստիքարգային վերակառուցումը յենթաբրում և նաև կապիտալիստական տարրերի վանումը և լիկվիդացիան : Դասակարգերի վերացման ինդիքտը անհնարին և իրականացնել առանց ինդուստրացման :

Այսպիսով մենք տեսմում ենք, վոր ինդուստրացումը մեր ժողունտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքն է : Թե ինչպիսի դժվարություններ կան սոցիալիստական վերակա-

ռուցման և կոլեկտիվացման աշխատանքներում, այդ ժամանք մենք բավականաչափ խոսեցինք նախորդ գլխում:

Այժմ տեսնենք թե ինչպես են ընթառում ինդուստրացման հիման վրա մեր սոցիալիստական վերակառուցման և կոլեկտիվացման աշխատանքները:

«Անցյալ 1929—30 տնտեսական տարին, հնդամյակի յերկրորդ տարին, սոցիալիստական շինարարության գործում բանվոր դասակարգի ձեռք բերած նոր և խոչորակույն նվաճումների տարի համդիսացավ, հնդամյա պլանի առաջարկանքները կատարված են զգալի գերակատարումով բոլոր հիմնական ցուցանիշների վերաբերմամբ . . . : Առանձնապես զգալի յեն արդյունաբերության այն ճյուղերի հաջողությունները, վորոնք արտադրության միջոցն են արտադրում: . . . Միության ամբողջ ֆարբիկա-գործարանային արտադրության չափը 1929—30 թ. ավելի քան 2 անդամ գերազանցեց նախապատերազմյան տարեկան արտադրությանը:

գ) Սոցիալիստական ինդուստրիայի հաջողությունները ապահովեցին դյուզատնտեսության արմատական բեկումը զեղի սոցիալիստական զարգացումը: Լուրջ նվաճումները գյուղատնտեսության ասպարեզում, հիմնականում հացահատիկային սլըրլեմի լուծումը ուղղակի արդյունք են հանդիսանում այն խոչորագույն հաջողությունների, վոր ձեռք են բերված ժողտնտեսական խորհանության շինարարության ասպարեզում և համատրած կոլեկտիվացման հիմունքով կուլակությունը վորպես զառակարգի անշեղորեն վերացնելու ասպարեզում: Կոլտնակառությունների կողմից 1930 թ. գարնանը և աշնանը ցանած տարածություններ են 43,4 միլիոն հեկտար, հնդամյակի վերջին տարվա համար նախատեսված 20,6 միլիոն հեկտարի հանդեպ:

Սոցիալիստական շինարարության գործում ձեռք բերված հաջողությունները այսպիսով, անվիճելի յեն: Հնդամյա պլանի առաջարարները վոչ միայն կատարվում, այլ և զգալի չափով գերազանցվում են, ամբողջ հնդամյակի կատարումը չորս տարում ապահովելով:

Այս փաստերի լույսի տակ միանդամայն ակներև են դասնում ինչպես աջ և «ձախ», նույնպես և բուրժուական մամուլի այն աղաղակների ծիծաղաշարժությունը հնդամյակի վիճակն ամսին, վոր նա բարձրացնում են ամենից առաջ նրա համար, վոր պեսզի սքողի կապիտալի յերկրում գոյություն ունեցող խոշո-

քագույն անտեսական կրիզիսը» (Համ Կկ (Բ) Կկ և ԿՎՀ-ի 1930 թ. դեկտեմբերյան պլենումի բանաձեւից):

Հնդամյակի առաջին յերկու տարում մենք ունեցանք հըսկայական հաջողություններ. 1931 թվին շնորհիվ սոցիալիստական դյուզատնտեսության նշանակալից տեսակարար կը ունի և սոցիալիստական սեկտորի բացարձակ գերակշռության ամբողջ ժող. տնտեսության մեջ, կուսակցությանը հաջողվեց առաջին անգամ կազմել այնպիսի ժողովրդատնտեսական պլան, վորը ընդգրկում է ուղղակի պլանավարման կարգով միաժամանակ և արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Այդ պլանի համաձայն մեր ինդուստրիան 1931 թ. աճելու յե 1930 թ. համեմատությամբ 45 տոկոսով, իսկ մասնավորաբար ծանր ինդուստրիան 58 տոկոսով, ինքնարժեքը իջեցվելու յե 10 տոկոսով, իսկ աշխատանքի արտադրողականությունը բարձրանալու յե 28 տոկոսով:

1931 թ. գործի յեն դրվելու ներդրված 4 միլիարդ ռուբլու ձևոնարկները (518) և նոր ներդրում ե կատարվելու 5,5 միլիարդ ռուբլու: 1931 թ. մեքենամատակարարությունը՝ գյուղատնտեսությանը՝ 450 միլիոն ռուբլուց աճելու յե 766 միլ. ռուբլու:

Մյուս կողմից ել գյուղատնտեսությունը արդյունաբերությանը տալու յե հումույթ անցյալ տարվանից ավելի՝ բամբակ 45 տոկոսով, վուշ 55 տոկ., շաքարի ճակնդեղ 41 տոկ. և այլն:

Կոլեկտիվացման միջին տոկոսը հիմնական հացահատիկային ուայրներում հասնելու յե 80 տոկոսի, մնացած հացահատիկային, բամբակի և ճակնդեղի ուայրներում 50 տոկոսի, իսկ սպառող ուայրներում 25 տոկոսի:

Ժողովրդական յեկամուտը 1931 թ. հանելու յե 49 միլիարդ ռուբլու, վորից 82 տոկ. հանրայնացված սեկտորում: Դեկտեմբերյան պլենումը առաջարկեց ինդիք 1931 թ. ավարտել սոցիալիզմի ֆունդամենտի կառուցումը՝

«Ստեղծել սոցիալիզմի տնտեսական բարան, դա նշանակում ե շաղկատել գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ վորակեա մի ամբողջական տնտեսություն, յենթարկել դյուզատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի դեկավարման, կարգի բերել քաղաքի հարաբերությունները՝ վյուղատնտեսության և ինդուստրիայի պրոդուկտների ուղղակի ժուխանակության հիման վրա, փակել և վերացնել բոլոր այն կանալները, վորոնց ողնությամբ ծնվում և դառակարգու և ծըն-

վում և առաջին հերթին կապիտալը, ստեղծել վերջիվերջո արտադրության և բաշխման այսպիսի պայմաններ, վորոնք ուղղակի և անմիջականորեն բերում են գասակարգերի վերացմանը»։ (ԱՅԱՀԻՆ)։

Անգամ չափազանց հակիրճ այս մի քանի ամփոփումները, վոր մեզ հաջողվեց կատարել, բոլորովին ակնրախ են գարձնում թե ինչո՞ւ սոցիալիզմի հաղթանակի համար պայքարող մեր կուսակցությունը իր քաղաքականության անկյունաքարը այսոր համարում և մեր յերկրի արագատեմպ ինդուստրացումը և ամեն որ ու ամեն ժամ կազմակերպում ու զեկավարում և լայն աշխատավորական մասսաների համար և տոկուն պայքարը ինդուստրացման բայլեվիկյան տեմպերի համար։

#### IV. ԽՍՀՄ-ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱԳՈՐԾԻՄԸ

Մարդիկ առվորդար շատ ջանքեր են քափամ, պայքարի մեջ են մտնում բնության հետ, վորպեսզի բնության իրերը վերամշակեն իրենց պահանջները բավարարելու համար։ Մարդը բնությանը հարմարվում է վոչ թե պաստիվ, այլ ակտիվ կերպով, նա բնությանը հարմարվում է հասկանալով՝ նրա ուժերը, ողագործելով այդպիսին իր շահերի համեմատ և փոխելով բնությունն իրեն (ժարդու) կողմից ստեղծված գործիքներով։ Միաժամանակ մարդիկ բնության դեմ պայքար են մզում, վոչ թե անհատ-անհատ վորպես Ռոբինոններ, այլ հասարակությամբ, վորովհետեւ անհնար և պայքար բնության դեմ այն նվաճելու և մարդուն հպատակեցնելու համար՝ առանց մարդկային հասարակության, կազմակերպված ներգործության։ Սակայն, մարդը գնալով ավելի փոխելով, նվաճելով բնությունը, ինքն ամելի յե փոխում իր պայքարի յեղանակները, այսինքն՝ իր սեփական բնությունը վարպեսզի հնարավոր լինի մարդկային արտադրական գործունեությունը, անհրաժեշտ են հետեւյալ յերեք փակտորները՝

1. Բանվորական ուժ, 2. արտադրության դործիք, 3. աշխատանքի իր (այն, ինչ պիտի վերամշակման յենթարկի, ինչի վրա մարդը պիտի աշխատի)։

Այդ յերեք դործոնների—կոմպոննենում պիալեկտիկական միասնությունն ե, վոր կազմում է հասարակության արտադրողական ուժերը։

Այսպիսով՝

ա) աշխատանքն իբրև եներգիայի նպատակահարմար գործադրում (նոր սպառողական արժեք ստեղծելու համար) բ) այն առարկան, վորի վրա թափվում է այդ աշխատանքը, գ) գործիքները, վորոնցով այդ աշխատանքը կատարվում է,—այս բարոր այս կամ այն կազմակցությամբ յուրահատուկ են պատմությանը հայտնի բոլոր հասարակական փորձացիաներին։

Մարդը մատնանշում է, վոր յուրաքանչյուր հասարակական անտեսական փորձացիա մյուսից տարբերվում է նրանով, ինչպես են միացված հասարակական-արտադրական ուժերի մատնանշված յերեք կոմպոննենումները՝ բանվորական ուժն արտադրության միջոցների, (այսինքն գործիքների և աշխատանքի առարկայի) հետ։ Այնուհետև Մարդը մատնանշում է, վոր «տնտեսական եպոխաները դանազանվում են վոչ թե նրանով, թե ինչ ե արտադրվում, այլ նրանով թե ինչպես ե արտադրվում, ինչպիսի աշխատանքի միջոցներով, այսինքն՝ արտադրության յեղանակով։ Այդ չխմնական ու գլխավորը մեզ անհրաժեշտ ե լավ հիշել յուրացներու համար՝ ինչպես անտեսական առանձին փորձացիաների ներքին բովանդակությունը, նույնպես և հասարակական արտադրության պրոցեսների կարգավորման մեթոդները։

#### ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Կապիտալիստական հասարակարդի բնորոշ և հատկանշական կողմը վոչ թե այն ե, վոր արտադրության միջոցները կազմում են մասնավոր սեփականություններ, այլ այն, վոր այդ հասարակական կողմից պայմաններում իրենք անմիջապես արտադրողները զուրկ են արտադրության միջոցներից, այլտեղ բանվորական ուժը և արտադրության միջոցները անջաւաված են միմյանցից և նրանց «միացումը» կատարվում է շուկայի միջոցով՝ բանվորական ուժը, վորպես առըսնք վաճառելու միջոցով։ Կապիտալիստական այդ գերակշռող արտադրական-հարաբերություններից ել բղխում է կապիտալիստական արտադրության անարխիկ բնույթը՝ այն, վոր արտադրության և բաշխման պրոցեսն է իշխում մարդկանց փրա և վոչ թե մարդիկ նրա վրա այն, այն, վոր մարդկանց հասարակական արտադրական հարաբերություններն առարկայական տեսք են ստանում։ Կապիտալիստական հասարակարդում առանձին ցար ու ցրիկ ապրանք արտադրողներին միացնում է չուկան, շուկայական գները։ Ապրանքա-կապիտալիստական անտեսության մեջ ար-

տաղբության այս կամ այն ձյուղի լայնացումը կամ կրծառումը, ինչպես և արտադրության կարգավորումը առհասարակ՝ կատարվում ե վոչ թէ գիտակցված, նախորոք ծրագրված յեղանակով, այլ տարերայնորեն արժեքի որենքի հիման վրա:

Հասարակական աշխատանքի վրոշ պրապորցիաներով բաշխման անհրաժեշտությունը, վոր հատուկ ե և պարտադիր բոլոր տնտեսական ֆորմացիաների համար, կազիտալիդմի պայմաններում ստեղծվում ե շարումնակ խախտելու դնով և խախտվում և ստեղծելու համար ու ստեղծվում խախտվելու միջոցով:

Դա ինքն ըստինքյան պարզ ե, քանի վոր յենթագրենք տըվյալ ալրանքի գինը չուկայում ապահովում ե բացի միջին շահից, նաև վորոշ գերշահի ստացում (այսինքն՝ գինը բարձր ե արտադրության գնից—արժեքից), այդ գետքում չառ ուրիշ կապիտալիստներ կական արտադրել այդ ապրանքից, վորի հետևի գործով չուկայում նրա գինը կընկնի արտադրության գնից ցածր: Դրա հետվանքով կրծառվի այդ ապրանքի արտադրությունը և կազիտալները կտեղափոխվեն մի այլ ձեռնուու ապրանքի արտադրության վրա: Այդտեղ ել նույն յերկութը կլինի և այդպես անվերջ:

«Ապրանքային աշխարհի Փետիշական բնույթը ծնվում ե այն աշխատանքի յուրահատուկ հասարակական բնույթից, վորը արտադրում ե ապրանք: Ապրանքային աշխարհի ամբողջ միատիցիումը, բոլոր հրաշքները և տեսլիքները, վորոնք շղարշում են աշխատանքի պրոդուկտները՝ ապրանքային արտադրության տիրապետության ժամանակ—այդ բոլորը անմիջապես անհետանում են, հենց վոր մենք անցնում ենք արտադրության այլ ձեվերի»:

Այսուհետև «Անմիջական հասարակական արտադրությունը, ինչպես և ուղղակի բաշխումը ժխտում ե ամեն մի ապրանքային փոխանակություն և հետեւաբար պրոդուկտների վերացումը ապրանքների և դրա հետ մեկտեղ նրանց վերածումը արժեքների» (Մարքս):

### ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր պրոդուկտը վորոշ պատմական պայմաններում, ապրանքակազիտալիստական արտադրական հարաբերական պայմաններում, դառնում ե ապ-

րանք, հետեւաբար արժեք: Այդ ապրանքի միջոցով ե, վոր ըստեղծվում ե կապ առանձին ապրանքաբարտադրողների մեջ: Լիակատար պլանային տնտեսությունը անցնելու հետեւանքով պրոդուկտը զարգարում ե ապրանք մինելուց և մնում է միայն և միայն վորակես պրոդուկտ:

Ընդհանուր գծերով ծանոթանալով կապիտալիստական արտադրության, «կարգավորման» հետ, անհրաժեշտ ե, վոր մենք անցնենք մեր արտադրության և տեսության կարգավորման մեջուղին: Սակայն մենք չենք կարող մեղ համար պարզել մեր արդատակությունը և նրա մեթոդները, յեթե գոնե չառ համառուտակի կերպով կանգ չառնենք մեր անցման շրջանի եկոնոմիկայի մի շարք տեսական խնդիրների վրա:

«Կապիտալիստական և կոմունիստական հասարակությունների միջև ընկած ե առաջինը՝ յերկրողի հեղափոխականորեն վերափոխելու ժամանակաշրջան» (Մարքս):

«Թերիապես կասկածի յենթակա չե այն, վոր կապիտալիզմի և կոմունիզմի միջև ընկած ե վորոշ անցման շրջան: Նա իր մեջ չի կարող չմիացնել հասարակական տնտեսության յերեք ձեվերի հատկությունները» (Լենին):

Անցման շրջանը—զա սոցիալիզմի կառուցման վրանն է: Անցման շրջանի եկոնոմիկան պառանձին տնտեսական ֆորմացիանցից չի ներկայացնում, այլ անցումն և մի տնտեսական ֆորմացիայից (կապիտալիզմից), գեպի մյուսը (սոցիալիզմին): Մենք տեսանք, վոր յուրաքանչյուր հասարակական-տնտեսական ֆորմացիա մյուսից տարբերվում ե նրանով, թէ ինչպես ե միացվում բանավորական ուժը արտադրության միջոցների հետ: Ճիշտ ե, կապիտալիզմի պայմաններում բացի վարձու աշխատողներից—բանվորներից, կան նաև մանր արտադրությունը այս գերիշխողը այն ձեւն ե, վոր բանվորը զուրկ է արտադրության միջոցներից և վորպեսզի հասարակական արտադրուղական ուժերը գործեն՝ բանվորական ուժը չուկայում պիտի վաճառվի իրեր ապրանք և այդպիսով միացվի արտադրության միջոցների հետ, վորպիսից կազմում են վոչ անմիջական արտադրողների սեփականություն:

Զհայած դրան, արտարահելով մենք կարող ենք մաքուր կապիտալիզմ պատկերացնել: Սակայն կարո՞ղ ենք արդյոք մաքուր անցման շրջանի եկոնոմիկա պատկերացնել, վորի պայմաններում միատեսակ միացում գոյություն ունենա բանվորական ուժի և

արտագության միջների, մեր եկոնոմիկայի բոլոր տնօւնաւայլերում:

Դա կիներ անհեթեթություն, վորովհետեւ այդպէս մտածել դա կնշանակի մեր տնտեսությունը չդիմել վորպես անցման շըրջանի տնտեսության, այլ ժողովնալ նրան կամ վորպես կտորիտուական տնտեսության մոդեֆիկացիան և կամ լրիվ սոցիալիստական տնտեսություն:

Հիրավի, նրանք, ովքեր մեր անցման շրջանի եկոնոմիկան ընդունում են վորպես առանձի տնտեսական ֆորմացիա, նրանք նագույնում են ճիշտ գծից (աջ կամ «ձախ»), այն է կամ ընդունում են հանջում են ճիշտ գծից (աջ կամ «ձախ»), այն է կամ ընդունում են եկոնոմիկան իրեն լրիվ սոցիալիստական եկոնոմիկա, կամ իրեն կապիտալիստական եկոնոմիկայի մոդեֆիկացիան:

Այն հանդամանքը, վոր մեր անցման շրջանը առանձին տնտեսական ֆորմացիա չե, բոլորվին եւ չե կամ բարեկան որինաչափությունները չունի, վոր մեր մեր մոտ քառ և տիրում:

Մեր անցման շրջանի տնտեսությունը նմանապես տնտեսական սիստեմ է, բայց սիստեմ է վոչ թե տնտեսական ֆորմացիայի իմաստով, այլ սիստեմ է անցման տնտեսություն, սիստեմ է կամ ռուցվող սոցիալիզմի, վորը ներկայացնում է իրենից առաջին պատմական որինակը պլանային գարգացման:

Մեր հնդամյակը, տարեկան և այլ պլանները, զինքեր են մեր ժողովրդական տնտեսությունը հեղափոխականորեն վերափոխելու համար: Այդ ամբողջ վերափոխումը կատարվում է միակ հոլովուն դաստիարակի՝ պրոլետարիատի զեկավարությամբ:

Իսկ մեր միանական տնտեսությունը, նրա կառուցվածքային երությունը ուսումնասիրելու համար, պետք է բաժանել յերեք սուբյեկտնեսուական սեկտորների՝ 1. սոցիալիստական, 2. մանր ապրանքային և 3. կապիտալիստական:

Մեր ժողովրդական տնտեսության հեղափոխական սոցիալիստական վերակառուցման գործում առաջնորդող դերը կատարում է սոցիալիստական սեկտորը, այդ նույն վերափոխության ոլորցեւ սոցիալիստական սեկտորը աստիճանաբար զառնում է և առողջության դաշտել և զերակւողը:

Մեր ապրանքային սեկտորի նկատմամբ վերափոխումը առաջայտվում է նրանց ոգնելու և արտադրական կոռուպերացման յենթարկելությանը, իսկ կապիտալիստական սեկտորի նկատմամբ

նրան նեղելու, դուրս վանելու և վերջնական լիկվիդացիայի ձեղով: Այդ կերպով ե կատարվում մեր տնտեսության հեղափոխական վերափոխումը սոցիալիստականի: Դեպի սոցիալիզմ կատարվող այդ շարժման մեջ ե կայանում մեր անցման շրջանի որինաշաբությունը, վորը բղխում ե անցման շրջանի արտադրական հարաբերությունների սխատեմից:

Այդ շարժումը տւղեկցվում է սրված դասակարգային պայքարով, վորը բղխում է մեռնող դասակարգի կատարի դիմադրությունից:

Ենցման շրջանի եկոնոմիկան արուեստաբական հեղափոխության տարբեր ետակներում տարբեր արտահայտություններ ե տուանում:

Անցման շրջանը նոր ֆորմացիայի (սոցիալիզմի) ստեղծման շրջանն է, հետեւաբար նա և այդ նոր ֆորմացիային համապատասխանող մատերիալ-աեկանիկական բազայի ստեղծման շրջան է: Ենցման շրջանի եկոնոմիկայի բնորոշողը բանվորական ուժի և արտադրության միացման տարբեր յեղանակը: Այդ վերափոխումը ները սոցիալիստական եկոնոմիկայի համար: Այդ վերափոխումը կատարվում է սոցիալիստական սեկտորի դեկտարությամբ:

Անցման շրջանի գարգացման ավալ ետակնում սոցիալիստական սեկտորում գոյություն ունեցող բանվորական ուժի և արտադրության միջոցների միացման յեղանակը հանդիսանում է զերականությունը ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ:

Զնայած դրան չի կարելի մեր ժողովրդական տնտեսության տվյալ սեկտորում գոյություն ունեցող միացման յեղանակը տառածել բարելոր սեկտորների վրա, ինչպես այդ անում են աշխերը և բոլոր սեկտորների վրա, ինչպես այդ գերեզմանը (հակառակ ծայրերից): Մեր անցման շրջանի եկոնոմիկան իրենից ներկայացնում է զեկավարիկական միանությունը հերենից ներկայացնում է զեկավարիկական միջնորդը (տարբեր սեկտորների միջնորդը): Անչպես աթյան հակառակ ծայրերը (ամբողջ սեկտորների), իսկ Հայոց ծայրերը՝ միայն հակառակ ծայրենը (առանց միանության):

Մեր եկոնոմիկայի միանականությունը կայանում է վոչ թե

նրանում, վոր մենք մեր ամբողջ եկոնոմիկայի մեջ տևենք միևնույն արտադրական հարաբերությունները, այլ նրանում, վոր այդ արտադրական հարաբերություններից մեկը—սոցիալիստական սեկտորի արտադրական հարաբերությունները հանդիսանում են առաջնորդողը, գերակշռողը և սոցիալիստորեն վերափոխող մեր ամբողջ տնտեսություն:

Այդպիսով մեր տնտեսական սիստեմը դա վերափոխման սիստեմն է՝ մեկ սիստեմից դեպի մի ուրիշ (այն է՝ սոցիալիստական) անտեսություն:

Դրա համար —այսինքն՝ անցման ըրջանից սոցիալիզմին անցնելու համար վոչ մի նոր հեղափոխություն պետք չէ (անցման ըրջանը ինքը հեղափոխական ըրջան է): Հակառակ բուրժուատական հեղափոխության—պրոլետարական հեղափոխությունը չի ավարտվում իշխանությունը խլելով: Իշխանության դրավումը և պրոլետարիատի գիշտատառուրայի ստեղծումը դա առաջին քայլն և պրոլետարական հեղափոխության:

Հետագա դժվարին քայլը պրոլետարական հեղափոխության սոցիալիստական շինարարությունն է, սոցիալիզմի կառուցումն է:

Քանի վոր անցման ըրջանի եկոնոմիկան սոցիալիստական հեղափոխության եկոնոմիկան է, ուստի նրա որինաչափությունները ուսումնասիրելիք պետք է սկսել վոչ թե կապիտալիստական կատեգորիաների մահացման որինաչափությունից, այլ այն նորից, վորը հատկանշական է անցման ըրջանի եկոնոմիկային՝ այն է սոցիալիզմի կառուցման գործին:

Այդ բոլորից հետո պարզ է, վոր անցման ըրջանի որինաչափությունները՝ շարժման որենքները և արտադրության կարգավորումը անպայմանորեն պիտի բղխեցնել անցման ըրջանի արտադրական հարաբերությունների սիստեմից: Այդ արտադրական հարաբերություններն են մեր տնտեսության յերեք սեկտորների միջև դրյություն ունեցող հարաբերությունները:

Այդ հարաբերությունների բովանդակությունն է պրոլետարիատի դեկավարությամբ մանր արտադրողների սոցիալիստական վերափոխումը (արտադրական կոոպերացումը) և կապիտալիստական ելեմենտների (սեկտորների) առաջնանական վանումը և վերջնական լիկիվդացիան մեր զարգացման ներկա ետապում: Այսպիսով աեսնում ենք, վոր անցման ըրջանի եկոնոմիկայի հիմնական որինաչափությունն է՝ շարժում դեպի սոցիալիզմ՝ սոցիալիստական սեկտորի ընդլայնած վերաբերության հիման վրա

և հաշիվ մանր արտադրականի սոցիալիստական վերափոխման և ի հաշիվ կապիտալիստական սեկտորի նեղման, վաճառման և վերջնական լիկիվդացիայի:

Այդ շարժումից բղիել է հետեւյալ հիմնական մոմենտը՝ հանրայանացում և պլանավորում:

Հանրայանացման և պլանավորման առանձին մոմենտներն են կազմում եկապրոպիտորների եկապրոպիտացիան, պրոլետարական պետության ձեռքում ֆարբիկաների, գործարանների, տրանսպորտի կենտրոնացումը, վարկի կենտրոնացումը, մանր արտադրության կոլեկտիվացման համար համապատասխան տեխնիկական բաղայի ստեղծումը, ինդուստրացումը, կապիտալիստական տարրերի լիկիվդացիան և այլն:

Ահա սրանք են անցման ըրջանի եկոնոմիկայի սպեցիֆիկ որինաչափությունները, վորոնք բղխում են անցման ըրջանի արտադրական հարաբերությունների սիստեմից և հետեւլարար դեպի սոցիալիզմ կատարվող որինաչափությունից:

Հասարակական արտադրության կարգավորիչը բղխում է տիրապետող արտադրական հարաբերության սիստեմից, հետեւար և շարժման տրենքից (վարուժետեղ արտադրական հարաբերությունների սիստեմը պայմանավորում է նաև շարժման որենքը): Ուրիշ խօսքով ասած, արտադրական հարաբերությունների սիստեմից բղխում է շարժման որենքը, իսկ շարժման որենքից կարգավորումը:

Մեր ամբողջ ասածից չի հետեւում այն, վոր կարելի յե կառուցել անցման ըրջանի եկոնոմիկայի տեսություն «ընդհանրապես»: Բնդհակառակը մեր տեսական դիտողություններից հետեւ վում է այն, վոր անցման ըրջանի դիտեկտիկան պահանջում է առարկայի իիստ կրնկետ ուսումնասիրություն՝ նրա պատմական զարգացման մեջ:

Անցման ըրջանի եկոնոմիկայի տեսության խնդիրների իրական մարքսիստական մշակման համար անհարաժեշտ և պատմական թուտեցում, անցման ըրջանի ետապների ու անցումների ձգրիտուսումնասիրությունը, քանի վոր այդ առարկան (անցման ըրջանի եկոնոմիկան) վերին աստիճանի դիմամիկ և գտնվում է հարատեղ շարժման, փոփոխման ու իրար հաջորդող ետապների մեջ:

Այդ իսկ պատճառով, յերբ մենք խոսում ենք մեր պլանի ու

Նրա նշանակության մասին, պետք է մոտենանք այդ խնդրին կոնկրետ-պատմականորեն :

Այժմ հարց ե ծագում . ի՞նչ բան է հասարակական արտադրության կարգավորիչը : Դա այն որենքն է, զորի հիման վրա վորոշ հարաբերականություն և ստեղծվում հասարակական արտադրության տարբեր ճյուղերի միջև, կամ այլ կերպ ասած, վորոշ չափակցություններով ( պրոռոպա ) բարձրություն և հասարակական աշխատանքը ըստ արտադրության տարբեր ճյուղերի միջև :

Տարբեր տնտեսական ֆորմացիաներում այդ կարգավորիչը համապատասխան արտադրական հարաբերության սիստեմին թե իր ձեւով և թե իր բովանդակությամբ ( թե որենքի արտահայտությամբ և թե հարաբերականության բնույթով ) տարբեր են մնում :

Մեր պահնը ( կարգավորիչը ) հանգիսանում է իրեն դեմք հասարականորեն ( այլ հարաբերությամբ, քան կապիտալիզմի ժամանակ եր ) գիտակցված ձեւով բաշխելու նյութական միջոցները և հասարակական աշխատանքն այն ձեւով, վոր ապահովի մեր արագ չարժումը գեղի սոցիալիզմը :

Սակայն, մենք տեսանք, վոր խորհրդային տնտեսության կարգավորման խոդիրը լուծել չենք կարող առանց անցման շրջանի արտադրական հարաբերությունների հարցը պարզելու : Քիսնելով արտադրական հարաբերությունների խոդիրը տեսանք, վոր նրանք մեր անտեսության յերեք սեկտորների միջև գոյություն ունեցող հարաբերություններն են :

Այսպիսով մենք արդեն իմացանք, վոր մեր եկոնոմիկայի զարդարման որինաչափությունն է չարժում գեղի սոցիալիզմ, իսկ այդ հիմնական որինաչափությունից բավարար են սպեցիֆիկ որինաչափությունները՝ եկապրոցրիացիա, ինդուստրացում, հանրայնացում և այլն :

Կան մարդիկ, վորոնք կարծում են թե սոցիալիզմի ժամանակ տնտեսական որենքներ գոյություն չեն ունենալու ( արտադրական հարաբերություններ չեն լինելու, քանի սերտ անձնություն յեն եկոնոմիկայի հետ ), քանի վոր տնտեսությունը կարգավորվելու յե ամբողջովին մարդկանց գիտակցված կամքով :

Բայց չե, վոր դա անհեթեթություն է, վորովհետեւ չարժման որենքի բացասումը նշանակում է նաև չարժման բացասումը ( քանի վոր առանց չարժման որենքի չկանալ չարժում ) :

Այդ առթիվ կենինը մատնանշում եր, վոր կոմունիզմի ժամանակ չի լինի անտոդոնիզմ, բայց կմնան հակասությունները :

Խնդրը միայն նրանումն է, վոր կապիտալիզմի ժամանակ այլ որենքներ են, իսկ սոցիալիզմի ժամանակ բոլորովին այլ :

Բացի այդ, սոցիալիզմի ժամանակ եկոնոմիկայի որենքները լիովին ճանաչվում են: Սակայն այդ նույն ճանաչումը պայմանական վածքած և արտադրական ուժերի զարդարման մակարդակով: Ուստի շարժման որենքի ճանաչումը և արտադրության գիտակցված կարգավորումը չպետք է հասկանալ այն մտքով, վոր տնտեսական պրոցեսները կարգույթորոգ որդաները ինչ վոր ցանկանան, այն կարող են անել, այն իւմաստով, վոր նրանք այդ որենքների կույր խաղալիքը չեն դառնու և այդ որենքները իրենց գործողությունները հանգես կրերեն հասարակության գիտակցված կամքի միջոցով:

Այժմ հարց ե ծագում, թե մեր անցման ըրջանի եկոնոմիկան ինչ կերպ և կարգավորվում, ինչ որենքի հիման վրա՝ արժեքի որենքի, թե գիտակցված պլանային կարգով:

Այս հարցին մենք պարզ և վորոշակի տալիս ենք այն պատասխանը, վոր չուտեմբերյան հեղափոխությունից հետո մեր աընդեմությունը գաղաքել և կապիտալիստական լինելուց, վորի հետեւվանքով արժեքի որենքն ել զարդարել և մեր եկոնոմիկայի կարդավորիչը լինելուց, քանի վոր պրոլետարական-հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց կապիտալիստական արտադրական հարաբերությունների դեկալարող գերին և այդ դեկալարող դերն անցավ հեղափոխության հետեւվանքով նոր ստեղծված սոցիալիստական արտադրական հարաբերություններին:

Շնորհիվ պրոլետարական գիտաստուրայի գոյության և նրա ձեռքում տնտեսական իշխող բարձունքների գործիքուն, մեր անցման ըրջանի եկոնոմիկայի կարգավորիչը հանգիսանում և վոչ թե արժեքի տարերային որենքը, այլ պլանը:

Սակայն, շնորհիվ այն հանգամանքի, վոր մեզ մոտ գոյություն ուներ 24 միլիոն մանք գյուղացիական տնտեսություններ, վարչոց հետ անվաստափելի յեր կապի չուկայական ձեզ ( դրանից ել բղասում կը վորոշ սահմաններում կապիտալիզմի թույլատրումը ), քանի դեռ չեր ստեղծված անհրաժեշտ մատերիալ տեխնիկական բազա նրանց սոցիալիստական վերափոխման համար, ուստի դրանց վրա ներգործելով մեր անցման ըրջանի պլանը չկարող իրեն վրա չզգալ նրանց փոխադեցությունը :

Պետական-սոցիալիստական սեկտորը վճռական ներդուժություն ունենալով ամբողջ անցման ըրջանի տնտեսության սիստեմի վրա, չի կարող իր հերթին չպատճեն չուկայական հարաբերությունների ձևի ազդեցությունը:

Ամենից առաջ մեր պետական-սոցիալիստական սեկտորի կապը մնացած սեկտորների հետ մեր գարզացման տվյալ աստիճանում գեռ ևս զգալի չափով կատարվում է «չուկայի» միջոցով, վորե հետեւանքով մեր պետական-սոցիալիստական սեկտորը հարաբերությունների ապրանքային ձևն և ստանում՝ թե իր ներսում (տնտեսական հաշվառքի)՝ թե մյուս սեկտորների հետ կապվելիս:

Ենթադրենք փոխանակություն և տեղի ունենում մեր սոցիալիստական սեկտորի այնպիսի ձեռնարկությունների միջև, վորոնք բոլորովին ել կապված չեն մյուս սեկտորների հետ։ Որինակ՝ նեփակենդիկատը վաճառում է նավթ Զրաժողկոմատին գեղագում տնտեսական հաշվետեսության սկզբունքով նեփակենդիկատը նավթ չի բաց թողնի, մինչեւ վոր Զրաժողկոմատը համապատասխան գումար չվճարի (կամ փոխանցի նեփակենդիկատի կոնտոկորենաը)։

Այսուղ հարց ե ծագում, այդ նավթի գինն ինչպես և վորոշում չուկայի պահանջով ու առաջարկով (վոր իր հիմքում ունի արատրակտ-կապիտալիստական հասարակական աշխատանքը, արժեքը) թե պլանային կարգով։ Պարզ է, վոր այդ գները սահմանվում էն մեր պետական պլանային կաղմակերպությունների կողմից։ Այդպիսով կապի առանձնքային ձեր իր հիմքում չունի ապրանքակապիտալիստական հարաբերություններ ու բովանդակություն, այլ բոլորովին նոր-հասուլ պլանային յեղանակով կազմակերպված հասարակական աշխատանքի բովանդակություն, վորը իր մեջ կրում է տարերային ելնմենուներ։

Ինչ վերաբերում է առանձնքային ձելին, դա յել աստիճանաբար մահանում և ամենի տեղի տալով սոցիալիստական անմիջական պլանային հարաբերությունների ձեին (վարկային ռեֆորմ, կոնտրակտացիա)։

Վորքան գերակշռող ե դատնում նաև գյուղատնտեսության բնակավառում սոցիալիստական սեկտորը, այնքանով ել զերակըշում են անմիջական պլանավորման մեթոդները։

Այդպիսով մենք տեսանք, վոր սոցիալիստական հասարակարը լինելով պլանային, նրա կառուցումն ել կատարվում է

պրոլետարիատի ժողովրդատնտեսականի պլանով, և վոչ թե տարեբային կարգով։

Սակայն անցման ըրջանի պլանը դեռ ևս կապիտալիստական ոլլան չի։ Սոցիալիզմի պայմաններում պլանավորումը լինելու յեանմիջական, զուրկ տարերային ելեմենտներից, իսկ անցման ըրջանում պլանը գեռ ևս ստիպված է լինում «հաշվի» առնել տարերերը և աղդել նրա վրա, ինչպես անմիջականորեն, նույնպես և դեռևս վորոշ չափով կողմնակի պլանավորման մեթոդներով, այսպես կոչված «պլանային լծակների» միջոցով (պլանային վաճառահանում, գների քաղաքականություն, պլանային մատուկարում, վարկ, հարկ, արտադրական սպասարկում և այլն)։

Ենպիսի կատեգորիաներն, ինչպիսին են «չուկան», «դինը», «փողը», «վարկը» գերազանցապես կորցրել են իրենց կապիտալիստական բովանդակությունը (չին ձեւրի մեջ գոյություն ունի բոլորովին նոր բովանդակություն) և հիմնականում հանդիսանում են մեր ժողովրդատնտեսական պլանավորման և միասնական ժողովնեսական պլանի առանձին ձևերը (չուկայական, կապերի, գների, փողի գնողունակային ուժի, վարկի և այլի պլանավորում)։

Սակայն, քանի վոր մեր պլանավորումը «հաշվի» յե առնում նաև տարերային մոմենտը, վորը չի կարող չանդրագանալ պլանի թերակատարման և վորոշ շեղումների վրա, բայց այդ գոյությունը մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական կարգավորման ընթացքը չի փոխում, ուստի և սրբելի ուժ ստանալ չի կարող։

Վոմանք հարց են տալիս՝ արդյո՞ք կարող եր նեղ-ի սկզբի տարբիներին գոյություն ունենալ պլանային զեկավարություն, չե վոր առաջին ստուգիչ թվերը հանդես յեկան ժիայն 1925 թ.։ Դրանց պետք ե պատասխանել, վոր մեր արտադրական հարաբերությունների բնույթը չի կարելի վորոշել ստուգիչ թվերի հանդես գալու տարվանից, վոր յեթի նրանք մեր պլանային զեկավարությունը հասկանում են միայն գրված—չձեզակերպված պլաններով, ապա միթե «Կոմունիստական Մանիֆեստը», կամ մեր կուսակցության տնտեսական ծրագրերը, (Գուելու, Լենինի կոոպերատիվ պլանը) սոցիալիստական հարաբերությունները վերափոխող պլաններ չեն։

Դեռ ևս 1922 թ. Լենինը գրում եր «Քաղաքական իշխանությունը (պրոլետարիատի ձեռքում— Գ. Հ.)... միանդամայն

բավական է... անտեսական ուժը պրոլետարական պետության ձեռքում միանդամայն բավական է, վորպեսզի ապահովի անցումը դեպի կոմունիզմը»:

Այդպիսով պարզ է, թե վորքանով անհիմն է այն տեսակետը, վոր իր թե ՆԵՊ-ի առաջին տարիներին կամ վերականգնման շրջանում տնտեսությունը կարգավորում եր արժեքի ուրենքը, իսկ վերակառուցման շրջանում պլանը:

Միանդամայն հասկանալի յե, վոր պլանային հնարավորությունները, պլանավորման մեթոդներն ու ձեվերը փոխում են որդեկտիվ դրության փոփոխման հետ մեկող: Դրանք այլ եյին 1921 թվին, այլ են 1931 թվին:

Սակայն այդ չի նշանակում, վոր վերականգնման շրջանում մեր տնտեսությունը կարգավորում եր արժեքի որենքը, իսկ վերակառուցման շրջանում՝ պլանը:

Պրոլետարիատի ժողովրդատնտեսական պլանի տակ պիտի հասկանալ պործողությունների այն սիստեմը, վոր ուղղված և պրոլետարական պետության կողմէց՝ սոցիալիստական արտադրական հարաբերությունների ընդլայնած վերարտադրության, մանր ապրանքային արտադրության հասարակական հարաբերությունների սոցիալիստական վերակառուցման և կապիտալիստական հարաբերությունների մնացորդների վոչնչացման համար:

Այդ իմաստով սոցիալիզմի շինարարության պրոլետարական պլանը միաժամանակ անցման եկոնոմիկայի շարժման որենքի անբաժանելի մասն է հանդիսանում: Արտադրական հարաբերությունների տվյալ տիպի շարժումը անհնար է առանց արտադրողական ուժերի համապատասխան փոփոխության:

Մեր պլանը հանդիսանալով դեպի սոցիալիզմը կատարվող շարժման որենքի անբաժանելի առաջատար մասը, միաժամանակ անցման շրջանի եկոնոմիկայի կարգավորիչն է:

Մենք տեսանք, վոր անցման շրջանում տիբարետող արտադրական հարաբերությունները սոցիալիստական սեկտորի արտադրական հարաբերություններն են, վորոնք գնալով տիբապետող վնելուց զատ զառնում են գերակշռող, դրանից ել բղխում է մեր ԽՍՀՄ-ում վերաբարերության պրոցեսը, վորը հիմնականում ապահովում է շարժումը (ճիշտ քաղաքականության դեմքում) դեպի սոցիալիզմ:

Սակայն, ԽՍՀՄ վերաբարերության պրոցեսի միասնությունը և շարժումը դեպի սոցիալիզմ, վորը բերում է տիբապետող (սոցիալիստական սեկտորի) արտադրական հարաբերությունները լայնացմանը՝ ի հաշիվ կապիտալիստական արտադրական հարաբերությունների վանման ու լիկվիդացիայի և մանր արտադրության սոցիալիստական վերափոխման, այս բոլորը կատարվում ե վոչ թե տարերային, այլ հիմնված է պլանային դեկավարության վրա: Առանց պլանային դեկավարության, աներեվակայիլ յե սոցիալիզմի կառուցումը: Պլանը, վորն անցման անտեսության արտադրության կարգավորիչն է և գրահետ մեկտեղ հասարակական աշխատանքի բաշխման յեղանակն է, չի կարող անջատվել անցման շրջանի տիբապետող արտադրական հարաբերություններից ու նրանց վերաբարերությունից:

Պլանը (պլանավորումը) իրեւ տնտեսական կատանդորիա, իր հիմքում պետք է ունենա մատերիալ-աշխատանքային պրոցես համապատասխան սոցիալ-պատմական բովանդակությամբ ու ձեռվագությանը հասարակական աշխատանքն է: Մեր պլանի բովանդակությունը հասարակական աշխատանքն է: Բայց չե՞ վոր արժեքի որենքի բովանդակությունը նմանապես մարդկային հասարակական աշխատանքն է:

Այսուղ ամբողջ ինդիբը կայանում է նրանում, վոր արժեքն որենքի բովանդակությունը հասարակական այնպիսի աշխատանքի մասն է, վորն իր սոցիալ-պատմական բովանդակությամբ ու ձեռով հատուկ և ապրանքա-կապիտալիստական կարգերին (աբրուտրակտ աշխատանք):

Սակայն մեր պլանի բովանդակությունը կազմում է հատուկ պլանային կազմակերպությամբ—հասարակական աշխատանքը, պլանային կազմակերպությամբ—հասարակական աշխատանքը վարը մեր ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական կառուցվածքին տալիս և սպեցիֆիկ բնույթը:

Ուրիշ խոռոչ ասած մեր պլանի բովանդակությունը կազմուղ հասարակական աշխատանքը դեռևս այն չի, ինչ վոր լինելու յե սոցիալիզմի ժամանակ, նա իր մեջ ունի տարերքի ելեմենտներ:

Սակայն դեկավարող դերը պատկանում է գիտակցական ըստ կը բարունքին, վորը պայքարում է տարերքի դեմ և տատիճանաբար կը դրունքին, վորը պայքարում է տարերքի դեմ և տատիճանաբար պահպանում այդպիսին (սոցիալիստական ինդուստրացում, կուեկտիվացում) ապահովությամբ, կապիտալիստական ելեմենտների վանում և լիկվիդացում:

Պրոլետարական դիկտատորաքայլի (ԽՍՀՄ) պլանի բովանդակությունը կազմող հասարակական աշխատանքի հատուկ վորակությունը կապիտալիստական պլանավորության դեմքում:

կական բնույթը պարմանավորում են նաև այդ հասարակական աշխատանքի բաշխման քանակական հարաբերության բնույթը (առաջին հերթին ծանր խնդրաստրիայի գարզացում, հանրայնացում, ժողովրդական յեկամտի բաշխում), այդպիսով իսկ ապահովելով մեր արագ շարժման հասարավորությունը դեպի սոցիալիզմ:

Այսպէս, ինչպես քաղաքատնեսության մեջ (նեղ առումով) անհրաժեշտ է պայքարը յերկու թեքումների դեմ՝ մեխանիստական և իդեալիստական, այնպես էլ խորհրդային եկոնոմիկայի տեսության մեջ անհրաժեշտ է պայքարել մի կողմից այն թեքման դեմ, վորը մեր պլանավորման մատերիալ-աշխատանքային բովանդակությունը, նրա կախվածությունը (վոչ սլասիվ) արտադրողական ուժերից չի տեսնում (թեքում դեպի իդեալիզմը). և մյուս կողմից ել մեր հասարակական աշխատանքի սոցիալ-պատմական բնույթի, նրա պլանային ձեր թերապնահատման (մեխանիստական թեքում) դեմ:

Գլխավոր հարվածը ներկա ետպում, պետք եւ ուղղել մեխանիստական թեքման վրա, քանի վոր նա յե հանդիսանում աջ թեքման տեսակետը պլանային տեսության մեջ:

Խորհրդային տնտեսության կարգավորիչի հարցի վերաբերյալ յեղել են և կան մի քանի սխալ տեսություններ, վորոնց վերլուծության ու քննադատության վրա անհրաժեշտ ե թեկուզ համառոտակի կանոն առնել:

Նաև մի վորք կանգ առնենք այն բուրժուական տնտեսագետների տեսակետի վրա, վորոնք ընդունում են խորհրդային տնտեսության միակ կամ հիմնական կարգավորիչը՝ արժեքի որենքը:

Այդ աեսակետը իր փայլում արտահայտությունն ե դաել բուրժուական տնտեսագետ պրոֆ. Յուրովսկու մոտ: Պրոֆ. Յուրովսկին ինչպես և մյուս բուրժուական ու սոցիալ-դեմոկրատական տնտեսագետների մեջ մասը, խորհրդային տնտեսությունը դիտում ե իրեն ապրանքային-կապիտալիստական տնտեսության մի այլառակությանը, վորը միայն կոմունիստական եքսպերիմենտներով բանադատվում ե:

Մեր տնտեսության կարգավորիչը արժեքի որենքը համարելու բուրժուական տեսակետն իր արտահայտությունն ե դաել նաև մի շարք պատասխանատու կոմունիստ ընկերների մոտ: Որինակ՝ ընկ. Սմիլգան իր 1926 թ. հրատարակած «Վերականգնման պրոցես» վրքում գրում ե՝ «Ինչ է նշանակում տնտեսական հաշվետվության սկզբունքը». «Թեորիական եկոնոմի-

կայի լեզվով այդ նշանակում ե արժեքի որենքի ներդործության վերականգնումը մի շարք այնպիսի սահմանափակումներով, վորոնք բղխում են Խորհրդային Միության տնտեսության յուրահատկությունից»:

Ինչպես բուրժուական տնտեսագետների, այնպես ել Սմիլգայի տեսակետները բղխում են այն բանից, վոր նրանք մեր տնտեսության անցման բնույթը չեն ընդունում, չեն ընդունում գեղի սոցիալիզմ կատարվող շարժման որինաշափությունները և մեր տնտեսությունը համարում են կապիտալիստական տնտեսության այլառակությունը (մոդիֆիկացիան):

Թե վորքան անհիմն ե այս տեսակետը, այդ խնդիրը պարզվեց մեր տնտեսության վերլուծությունից և ապրանքա-փոխանակային հարաբերությունների ձեզի մեջ յեղած նոր բովանդակության վերլուծությունից:

### ԸՆԿ. ՅԵ. Ա. ՊՐԵՐԲՐԱԺԵՆՍԿՈՒ ՅԵՐԿՈՒ ԿԱՐԳԱՌՈՒԴՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Իբրև հակակշիռ մեր տնտեսության մեջ արժեքի որենքի միասնական կարգավորիչի տեսությանը՝ ընկ. Պրերբաժենսկուն առաջադրեց իր յերկու կարգավորիչների սխալ տեսությունը: Նա իր «Նոր եկոնոմիկա» գրքում գրում ե՝

«Իմ իրավաբային տնտեսությունը բաժ անվում ե յերկու մասի՝ պետական և մասնավոր: Պետական տնտեսությանը հատուկ է դարձացման իր որինաշափությունները, մասնավորին՝ իրենը: Բայց, թե այս, և թե այն, մտնում են Միության ամբողջական տնտեսության միասնական որգանիզմի մեջ: Թեորետիքական տնտեսության համար մեթոդոլոգիական տեսակետից անհրաժեշտության համար մեթոդները և ապա արդեն բացատրել, թե ինչպես ե որինաշափությունները և ապա արդեն բացատրել, թե ինչպես ե տացիւմ ունալ կյանքի համապղը: Մակայն պետական տնտեսությունը ուղարկացման տենգենցիները անհրաժեշտ ե դիտել իրենց մաթյան զարգացման արժանայի ընթանումը և դիտել իրենց մաթյան զարգացման պրիմարներից մեկն ըստ Պրերբաժենսկու՝ արժեքի որենքն և (մասնավոր սեկտորը), իսկ մյուսը՝ նեպական սոցիալիստական կուտակման որենքը (պլանային):

Այդ կարգավորիչներից մեկն ըստ Պրերբաժենսկու՝ արժեքի որենքն և (մասնավոր սեկտորը), իսկ մյուսը՝ նեպական սոցիալիստական կուտակման որենքը (պլանային):

Քանի վոր այդ յերկու կարգավորիչները բատ լնկ. Պիեռը առաջնութեաւ, մանուք են խորհրդային տնտեսության վորոշ սիստեմի մեջ, ապա նրանք հարկադրված են բաղիսվելու, վորի հետեւանքով մի կարգավորիչը զուտ մեխանիկորեն դուրս է մզվում մյուսի կողմէից և հաստատվում է «վորոշ համադր»:

Դժվար չեն նախ և առաջ տեսնել ընկ. Պրեոքամբենսկու մեթոդով գիտական սիստեմ, վորը հանդում է այն բանին, թե պետք է մարզուր կերպով ուսումնասիրել տարրեր սեկտորների որինաշափոթյունները և նրանց բաղկառմից ստացվող հավասարակըսությունը :

ինչ կստացվի, յեթե մենք անցման շրջանի եկոնոմիկայի միամնությունից կտրենք տարբեր սեկտորները։ Այդ գեպքում սոցիալիստական սեկտորում մենք կունենանք «մաքուր» սոցիալիզմ, առանց տարերային ելեմենտների, իսկ կապիտալիստական սեկտորում «մաքուր» կապիտալիզմ առանց գիտակցական պլանային ղեկավարության ու ներգործության, այդպիսով ընկ։ Պրեոքրատենսկին իր մեթոդոլոգիայով փակում է բոլոր հնարավորությունները մեր եկոնոմիկայի յուրահատուկ անցման բնույթը հասկանալու։ Նա մեխանիկորեն է բնդունում մեր անցման շրջանի եկոնոմիկայի սոցիալ-տնտեսական սեկտորները և նրանց հակառակություններն են միայն տեսնում։ Այն ինչ մենք գիտենք, վոր մեր անցման շրջանի եկոնոմիկան դա գիտակտիկական վիճակությունն է՝ հակառակությունների։

Մեր Նկոնոմիկայի մեջ մենք ունենք ունենք, վոչ թէ զանազան սեկտորների մեխանիկական գուգորդությունը, այլ որդանականն միասնությունը: Մեր սոցիալիստական սեկտորը հաղար ու մի թելիքով կապված է մանր արտադրական և կապիտալիստական սեկտորների հետ, վորոնք իրենց տարերային եկեմնատներն են մտցնում մեր պլանի մեջ. իսկ մանր արդարքային կապիտալիստական տարերքը զգում են պլանի գորեղ և կարգավորիչ ազդեցությունն իրենց վրա, վորի հետեւանքով մանր ավլանքային սեկտորը սոցիալիստորեն վերափոխվում է, իսկ կապիտալիստական սեկտորը աստիճանաբար նեղվում է և վերջնականապես լիկվիդացիայի յենթարկվում: Յեթե ժխտում ենք մեր եկոնոմիկայի միասնականությունը, դրանով իսկ մենք ժխտում ենք անցման եկոնոմիկայի պայմաններում վորոշ պրոսորցիաների սահմանության տարերը սեկտորի հյուզերի և արտադրության ու

սպառման միջն և սոցիալզմի հաղթական կառուցումը մեր յերկարությունը՝ Մեր եկանոմիկայի նման ըմբռնումը վոչ մի առնչություն չունի լճնինիզմի հետ և բացահայտ տրոցկիստական է:

ԸՆԿԵՐ Ա. ԿՈՆԻ ՅՅԵՐԿՄԻԱՍՆԱԿԱՆ» ԿԱՐԳԱՎՈՐՁԻ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ընկ. Ա. Կոնը քննադպտելով ընկ. Պրեոբրաժենիակու յերկու ռեգուլյատորների տեսությունն առաջադրում է իր յերկմիասնական կան կարգավորիչի տեսությունը:

«Կապիտալիստական տնտեսության յուրաքանչյուր անդամ—  
ասում է ընկ. Կոնը,—իրեն առաջ անհատական նպատակներ և  
վնաս և պայքարում է նրանց իրականացման համար : Անհատա-  
կան կամքերի ու ձգտումների պայքարի հետեվանքով ստացվում  
է մի վրոշ որյեկտիվ արդյունք, վորը թեև հանդիսանում ել ե-  
առանձին անհատների ձգտումների հետեվանք, բայց կարող ե-  
չտամատեղվել և չլի համատեղվում նրանց ցանկությունների հետ :

Հաստ կոնի ցմեղ մոտ ել կապի միակ ձեզ փոխանակություն

և, զոր այդ սղատմառով հասարակական հարբերությունների առարկայացումը չի վերացվում»։ Ըստ նրա «կարգավորման յերկու մեթոդներն ել իրացվում են միհնույն ապրանքի մեջ և զոր այդպիսով զինը միակ կափարիչն է . . . զոր ընդդրկում և նրանց»։ Ընկ. Կոնը Պրեոքածենսկու սխալը համարում է միայն այն, զոր չնա վերցնում է այդ կափարիչը»։

Այս բոլորից հետո, պարզ յերեկում է, զոր ընկ. Կոնը քըննապատելով Պրեոքածենսկուն, ինքը՝ Եյականում նրա տեսակետին և տուրք տալիս, և որյեկտիվորեն ընդունում յերկու կարգավորիչի տեսակետը, քանի զոր նրա մոտ ել միհնությունը խորհրդային տնտեսության մեխանիքական և «կափարիչն և ընդդրկում» յերկու որենքները։ Ընկ. Կոնը սոցիալիստական սեկտորն, ինչպես տեսանք վերը բերված ցիտատից, դիտում է իրեն «կամքերից մեկը», զորը մյուս կամքերից զուգընթաց աղղեցություն և գործում հասարակական զարգացման «համագոր»-ի վրա, այն տարբերությամբ միայն, զոր սոցիալիստական սեկտորը «իր որբամազընթյան տակ ունի Հզոր միջոցների հանրակութար»։

